

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԻԿԻ ԿՈՍՏԱՆՑԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ)

*ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության*

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Խաչատրյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Օսիպյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ.Վ.Ստեփանյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունվարի 20-ին, ժամը 12:00-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող իրավագիտության 041 մասնագիտական խորհրդում (0028, ք. Երևան-28 , Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017 թվականի դեկտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Հ. Ստեփանյան

Ընտրված թեմայի արդիականությունը: Հայ հասարակության մեջ հիմնականում դժգոհություն է առաջանում արդարության հաստատման և կայուն արդարադատության երաշխավորման առնչությամբ, իսկ Եվրոպային խորհրդին անդամակցելուց հետո հատկապես հանրության ակնկալիքները աճել են՝ Երկրում մարդու իրավունքների ամրապնդման հարցում: Այդ առումով, բնականաբար առաջնահերթ մտահոգությունները վերաբերում են անձի անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքների ապահովմանը: Վերջինս հատկապես կարևոր է, ընդհանրապես, երկրում մարդու իրավունքները երաշխավորելու տեսակետից, հետևաբար, երկրում արդար դատաքննության կատարելագործմանն ու արդարադատության որակի բարձրացումը բացարձակ և անհրաժեշտ նախադրյալ է երկրում մարդու իրավունքների պատշաճ իրացումը ապահովելու տեսակետից:

Հայ հասարակությունը, անկախությունից ի վեր պայքարում է ոչ միայն մրցունակ տնտեսություն, ապահով պաշտպանական համակարգ և հավասարակշռված արտաքին քաղաքականություն կառուցելու այլ նաև արդար դատական համակարգ ստեղծելու և երկրում արդարություն հաստատելու ուղղությամբ, հստակ պատկերացնելով, որ առանց վերջինիս վերը թվարկված բոլոր նպատակները մեղմ ասած անիրականանալի են: Այս առումով հասարակության մոտ ակնկալիքների աննախադեպ բարձր նշաձողի սահմանման հարցում լուրջ ազդեցություն ունեցավ 2001թվականի հունվարի 25-ին Եվրոպայի Խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և որ հատկապես կարևոր է՝ 2002թվականի ապրիլի 26-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) վավերացումը:

Այս երկու իրադարձությունները Հայաստանի համար անդառնալիորեն և վերջնականապես արդարադատության իրականացման ոլորտում առաջին պլան պետք է բերեին մարդու իրավունքները և ազատությունները՝ դրանով իսկ ասպարեզից հեռացնելով արդարադատություն իրականացնելիս քաղաքական կամ կուսակցական նպատակահարմարությամբ առաջնորդվելու ԽՍՀՄ իրականության մեջ սահմանադրական մակարդակի բարձրացված պրակտիկան:

Չպետք է մոռանալ, որ նման կտրուկ փոփոխությունը ուղեկցվել և շարունակում է ուղեկցվել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչնդոտներով, ընդ որում ոչ միայն Հայաստանում այլ նաև հետխորհրդային բոլոր երկրներում: Եվ սա բնական է, քանի որ Կոնվենցիան վավերացնելու և Եվրոպական մարդու իրավունքների չափանիշները մեր դատարաններում անմիջականորեն կիրառվող նորմ դարձնելու պահին, ինչպես նաև հիմա, մեր դատավորների գերակշիռ մասը եթե ոչ աշխատել, ապա առնվազն իրավաբանական կրթություն է ստացել ԽՍՀՄ ժամանակաշրջանում:

Իսկ ԽՍՀՄ ժամանակաշրջանում ինչպես հայտնի է դատարանները դերը տրամազծորեն տարբեր էր այն դերից, որ այս պահին հասարակությունը ակնկալում է դատարաններից: Մասնավորապես դատական ողջ համակարգը կարելի է ասել օտարված էր օրենքի մեկնաբանման գործառույթից: Խորհրդային դատական բուրգի գագաթին ֆորմալ առումով գտնվում էր ԽՍՀՄ Գերագույն դատարանը, որը վարչական վերահսկողություն էր իրականացնում մյուս բոլոր դատարանների

նկատմամբ, ներառյալ Միութենական Հանրապետությունների Գերագույն դատարանների նկատմամբ: Սակայն այս հանգամանքը չի նշանակում, որ ԽՍՀՄ Գերագույն դատարանը հանդիսանում էր այնպիսի Գերագույն դատարան ինչպիսին մենք հասկանում ենք այսօր: Գերագույն դատարանի վերաբերյալ ԽՍՀՄ օրենսդրությունը հնարավորություն էր տալիս ԽՍՀՄ Գլխավոր դատախազին ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի որոշումը բողոքարկել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահություն: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը՝ ԽՍՀՄ օրենքների պարտադիր մեկնաբանման իրավունք ուներ, ինչը ըստ էության նշանակում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի (օրենսդիր մարմնի) նախագահությունը իրականում հանդիսանում էր ԽՍՀՄ բարձրագույն դատական ատյանը: Նման բողոքարկման հնարավորությունը պատահական չէր, քանի որ ոչ թե ԽՍՀՄ դատարանները այլ ԽՍՀՄ Դատախազությունն էր հսկողություն իրականացնում օրենքների ճշտորեն և միատեսակ կատարման նկատմամբ:

Նման կտրուկ փոփոխություններից հետո ժամանակի հրամայականը դարձավ ողջ դատական համակարգի կողմից նրա նկատմամբ առաջադրված արդեն նոր Եվրոպական չափանիշների հնարավորինս արագ յուրացումը և կիրառումը պրակտիկայում: Այս առումով իրավագիտական գրականության մեջ խիստ պահանջված դարձան և շարունակում են մնալ գիտամեթոդական ձեռնարկները և մենագրությունները, որոնք հնարավորինս դյուրին կդարձնեին Եվրոպական մարդու իրավունքների մեզանում նոր, իսկ երբեմն նաև խորթ, չափանիշների արդյունավետ ներդրումը:

Եվրոպայի Խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության պահից (2002թվականի ապրիլի 26-ից) սկսած Հայաստանի դեմ կայացվել է 24 վճիռ՝ անձի անձեռնմխելիության (Կոնվենցիայի 5-րդ հոդված) և 37 վճիռ՝ արդար դատական քննության իրավունքների խախտման մասին (Կոնվենցիայի 6-րդ հոդված): Այս կապակցությամբ առաջին հերթին անրաժեշտ էր վերլուծել այդ բոլոր որոշումները՝ դրանց օրինաչափությունները վերհանելու և դրանց վերացմանն ուղղված միջոցները բացահայտելու ուղղությամբ: Միաժամանակ, նկատի ունենալով, որ ՀՀ մի շարք իրավակարգավորումները, այդ թում և հատկապես իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված նշանակությամբ ուղղակի հակասության մեջ են մտնում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ, հետևաբար, առաջացել է խիստ անհրաժեշտություն կատարել ամբողջական և համապարփակ վերլուծություն: Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն իրողության հետ, որ ներկա պահին Եվրոպայի Խորհրդի անդամ են հանդիսանում 47 պետություն, հետևաբար, Դատարանը գործ ունի 47 տարբեր պետությունների հետ, իրենց տարբեր իրավական, կրոնական, սոցիալ-տնտեսական, սովորութային, ժողովրդագրական, ժողովրդավարական և այլ առանձնահատկություններով, և որ առանց այս առանձնահատկությունները հաշվի առնելու անհնար կլինի ապահովել Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների պատշաճ պաշտպանությունը Կոնվենցիայի անդամ բոլոր պետություններում: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի վավերացման պահից, պետությունները ստանձնում են որոշակի

պարտավորություններ, որոնք կիրառելի են տվյալ պետության կողմից՝ անկախ իրենց ներպետական կարգավորման առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, նշված առանձնահատկությունների անխուսափելի գոյությունը ինքնին հանգեցրեց պետությունների կողմից ոչ միայն Կոնվենցիայի միատեսակ իմպլեմենտացման անհնարինության, այլև՝ որոշակի փաստերի դեպքում՝ կոնվենցիոն նորմերի կիրառման անթույլատրելիության:

Այնուհետև, հաշվի առնելով, որ մարդու իրավունքները չեն կարող լինել անսահմանփակ, Կոնվենցիան նախատեսում է որոշակի հիմքեր և պայմաններ, որոնց առկայության դեպքում պետությունն, ըստ էության, ձեռք է բերում այդ իրավունքներին միջամտելու իրավասությունը կամ՝ ազատվում է իր պոզիտիվ պարտականությունների կատարումից: Խոսքը վերաբերում է հետևյալին. մարդու յուրաքանչյուր իրավունք առաջացնում է համապատասխան պոզիտիվ պարտականություն պետության համար՝ ստեղծելու պայմաններ, ինչպես նաև, ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու մարդու իրավունքների պատշաճ իրացման հնարավորությունը: Սակայն, Կոնվենցիայով նախատեսված որոշակի հիմքերի առկայության պայմաններում, պետությանը իրավունք է վերապահում ոչ միայն ձեռնպահ մնալ այդ պարտականությունների կատարումից, այլև՝ սահմանափակել մարդու տվյալ իրավունքի իրացման փաստացի հնարավորությունը: Այսինքն, Կոնվենցիան պետություններին օժտում է որոշակի հայեցողությամբ՝ կիրառելու որոշակի սահմանափակումներ կամ ձեռնպահ մնալու որոշակի պարտավորությունների կատարումից: Բնականաբար, պետությունների այդ ազատությունը ևս պետք է լինի սահմանափակման առարկա, հակառակ դեպքում՝ կհանգեցնի մարդու իրավունքների համակարգային ոտնահարումներին: Այդ նպատակին են ուղղված կոնվենցիոն այն դրույթները, որոնք սահմանում են հստակ հիմքեր և պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն պետությունների կողմից պարտավորությունների չկատարումը կարող է համարվել ընդունելի: Մինևույն ժամանակ, Եվրոպական կոնվենցիոն համակարգի առանձնահատկությամբ պայմանավորված, Եվրոպայում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար Դատարանը ոչ միայն պետք է հաշվի առնի անդամ պետությունների առանձնահատկությունները, այն նաև, ընդհանուր միջազգային իրավունքի տեսանկյունից, ի թիվս, այլ հանգամանքների, պետք է սահմանափակվի պետությունների ինքնիշխանության սկզբունքով:

Հետևաբար, Եվրոպական դատարանի առաքելությունն է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը իրականացնել մի կողմից հաշվի առնելով պետությունների ինքնիշխանությունը, մյուս կողմից ամրագրված իրավունքների համընդհանուր բնույթը և, վերջապես, երրորդ կողմից, Կոնվենցիայի անդամ պետությունների առանձնահատկությունները: Հետևաբար, մենք հանգում ենք այն եզրակացության, որ պետություններին Կոնվենցիոն դրույթների կիրառման հայեցողություն տրամադրելը օբյեկտիվ անհրաժեշտություն էր և պայմանավորված էր նրանով, որ պետություններին պետք էր տրամադրել կոնվենցիոն իրավունքների երաշխավորման, հետևաբար, դրանց իրականացումը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում, կոնվենցիոն կարգավորումներից շեղվելու հնարավորություն: Վերլուծությունները հանգեցրել են այն հետևության, որ

հայեցողությունը դա պետություններին տրված հնարավորություն է՝ ապահովել արդյունավետություն ներպետական հարթության մեջ գործերի քննության նկատմամբ, քանի որ պետությունները, ի սկզբանե, գտնվում առավել շահեկան դրության մեջ իրենց ներքին խնդիրները ճիշտ և արագ լուծելու համար, քան միջազգային կազմակերպությունն է, հետևաբար, պետությունները որոշումներ ընդունելիս պետք է օժտված լինեն որոշակի ինքնուրույնությամբ: Մյուս կողմից, հայեցողության տրամադրումը տալիս է Եվրոպայի Խորհրդի կողմից կառուցած համակարգին մեծ ճկունություն, քանի որ տարբեր եվրոպական երկրների տեսակետները որոշ զգայուն հարցերի շուրջ, շոշափում են ավելի շուտ երկրի բարոյական-պատմական, սովորության արժեքային հիմքերը, որոնք միշտ չէ որ համընկնում են, հետևաբար դրանց որոշումը կախված է տեղական իշխանությունների դիրքորոշումից:

Այսինքն, նշված հարցերի ուսումնասիրության հրատապությունը պայմանավորված է Եվրոպական Կոնվենցիայի կիրառման և իմպլեմենտացման պետության հայեցողության և դրա սահմանների ճշգրտման անհրաժեշտությամբ՝ դրանց միջև հակասությունները իրավակիրառ պրակտիկայում վերացնելու և, բնականաբար, երկրի տարածքում մարդու իրավունքները Եվրոպայի Խորհրդի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ առաջնահերթությունը տալով անձի ազատության և արդար դատաքննության իրավունքներին: Ի դեպ հայեցողության սահմանների հստակեցումը նպաստելու է նաև երկրի ներսում իրավակարգավորումների կանխատեսվողություն և որոշակիություն հաղորդելուն և իրավակիրառ մարմինների և քաղաքացիների համար:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Չնայած պետության հայեցողության սահմանների հիմնախնդիրների տեսական-իրավական տեսանկյունների վերաբերյալ եղած հետազոտություններին՝ պետք է ընդունել, որ դրանք, որպես կանոն, լիարժեք չեն արտացոլում պետական-իրավական իրական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում: Օտարերկրյա պետությունների հայեցողության դրսևորմանը և դրա սահմաններին վերաբերող հարցերի և այդ սկզբունքի զարգացման պատմության և զարգացման միտումների մասին գոյություն ունի ծանրակշիռ գիտական գրականություն: Իսկ ինչ վերաբերում է ժամանակակից պայմաններում պետական-իրավական և դատա-իրավական բարեփոխումների գործընթացների վերլուծությանը, ապա այս տեսանկյունը մնում է ամենաքիչ լուսաբանվածներից մեկը:

Պետության հայեցողությունը և դրա սահմանները հայկական իրավաբանական գիտությունների կողմից ուսումնասիրված չէ: Չնայած այդ հիմնախնդրի առանձին ասպեկտներ հայրենական հրապարակումներում լուսաբանվել են՝ իրավագիտության մեջ դրա վերաբերյալ հատուկ մենագրային հետազոտություններ չկան: Գիտական աշխատանքներ, որոնցում հետազոտվում են պետության հայեցողությունը և դրա սահմանները, այնուամենայնիվ առկա չեն: Հաշվի առնելով այն իրողությունը, որ պետության հայեցողության սահմանների հիմնահարցը Եվրոպային Խորհրդի անդամ երկրներում հիմնականում նույնաբովանդակ է, ատենախոսությունում լայնորեն օգտագործվել են այդ երկրների գիտնականների ուսումնասիրությունները:

Հետխորհրդային պետություններում խնդիրը հետազոտության է ենթարկվել այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Օրլովա Յու.Մ.¹, Լիպկինա Ն.Ն.², Բեկյաշև Կ.Ա.³, Զիմենկո Բ.Լ.⁴ և այլն:

Արտասահմանյան հեղինակներից հատկապես հարկ է առանձնացնել Yourow H.C.⁵, George Letsas⁶, Arai-Takahashi Y⁷ և այլոք:

Արևմտյան գրականության մեջ առավելապես քննարկվում են պետության հայեցողության և դրա սահմանների առավելություններն ու թերությունները, ինչպես նաև կապը ներպետական իրավական համակարգի միջև: Բավականին մեծ թիվ են կազմում պետության հայեցողության սահմանների տարբեր կողմերի ուսումնասիրություններին նվիրված աշխատանքները, որոնք կարևոր նշանակություն ունեն պետության հայեցողության դրսևորման ընդհանուր տեսության մշակման համար: Հատկապես ուսումնասիրված են պետության հայեցողության սահմանների հիմնախնդիրները Կոնվենցիայի 8-11 հոդվածների համատեքստում: Սակայն անձի անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքների իրացմանը միջամտելու մասին պետության հայեցողության սահմաններին նվիրված ամբողջական և համալիր աշխատության չենք հանդիպել:

Չնայած կոնվենցիոն նորմերի կիրառման պետության հայեցողության և դրա սահմանների առանձին ասպեկտներ արտացոլվել են գիտական գրականության մեջ, այնուամենայնիվ պետության հայեցողությանը և դրա սահմաններին վերաբերող անհրաժեշտ է փաստել, որ մեզանում չկա և ոչ մի մենագրություն, գիրք կամ գրքույկ: Այլ է իրավիճակը արևմտյան գիտության մեջ, որտեղ այս հիմնահարցը մշակվում է վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Իսկապես, պետության հայեցողության և դրա սահմանների ճշգրտման կարիքը առկա է: Քիչ հետազոտված են պետության հայեցողության դրսևորումները ազդի ազատության և արդար դատաքննության իրավունքների իրացման կոնտեքստում, այդ համակարգի էվոլյուցիան և այլն: Ուսումնասիրված չեն Հայաստանի Հանրապետության հայեցողության սահմանները Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի իմպլեմենտացման գործընթացում: Բացի այդ՝ առկա են վիճահարույց մի շարք հարցեր, որոնք վերաբերում են անձին ձեռքարկելիս կամ կալանավորելիս, վերջինիս արդար դատաքննության իրավունքի իրացմանը միջամտելու եղանակներին, միջոցներին ու միջամտելու աստիճանին: Շատ

¹ Օրլովա Յու.Մ. *Եվ Դատարանի համագործակցությունը միջազգային և ազգային դատական հաստատությունների հետ*. Կազան, 2005.

² Липкина Н.Н. *Правовые позиции Европейского Суда по правам человека относительно свободы усмотрения государств при осуществлении вмешательства в права и основные свободы*: Саратов, 2008

³ «Միջազգային հրապարակային իրավունք» Կ.Ա.Բեկյաշևի խմբագրությամբ: Մոսկվա.: Պրոսպեկտ, 2009.

⁴ Զիմենկո Բ. *Միջազգային իրավունքը և Ռուսաստանի Դաշնության իրավական համակարգը* Մոսկվա., 2006.

⁵ Yourow H. «The margin of appreciation Doctrine in the Dynamics of European Human Rights// Connecticut Journal of International Law», -vol. 3/- 1987.

⁶ George Letsas «A theory of interpretation of the European Convention on Human Rights», Oxford 2007,

⁷ Arai-Takahashi Y, «The Margin of Appreciation Doctrine and the Principle of Proportionality in the Jurisprudence of ECHR», 2002.

բացեր և վիճահարույց պահեր կան՝ կապված այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են պետության հայեցողություն, հայեցողության սահմաններ հասկացությունը և տիպաբանությունը: Այս ամենը վկայում է այն մասին, որ առկա է Հայաստանի Հանրապետության ներպետական մակարդակում անձի ազատության և անձեռնմխելիության, ինչպես նաև՝ արդար դատաքննության, կոնվենցիոն իրավունքների իմպլեմենտացման, ինչպես նաև այդ իրավունքներին միջամտելու պետության հայեցողության սահմանների հիմնախնդրի տեսաբանական մշակման կարիք:

Հետազոտության օբյեկտը առաջին հերթին պետության և իրավակիրառ մարմինների «հայեցողությունն է», որպես ինստիտուտ, այնուհետև՝ «հայեցողության սահմաններ» սկզբունքի էությունն ու բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների իրավակիրառ համակարգի պայմաններում: Հետազոտության հիմնական օբյեկտը Հայաստանի Հանրապետության դատարանների հայեցողության դրսևորումներն ու դրա սահմաններն են՝ Կոնվենցիոն կարգավորումների իմպլեմենտացման հարցում:

Հետազոտման առարկան են Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ անձի ազատության և արդար դատաքննության իրավունքների խախտման հարցերով: Միաժամանակ, առանձին քննարկման առարկա է հանդիսանում Եվրադատարանի նախադեպային իրավունքը Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռների սահմաններում՝ անձի ազատության և արդար դատաքննության խախտման փաստերի կապակցությամբ այդ իրավունքների իրացմանը պետության միջամտության հայեցողության և դրա սահմանների վերլուծությամբ:

Հետազոտության նպատակը Եվրադատարանի նախադեպային իրավունքի և Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի և դրանց համադրության պայմաններում անձի ազատության և արդար դատաքննության իրավունքի իրացմանը միջամտելու պետության հայեցողության առավելությունների, թերությունների, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման նպատակահարմարության տեսաբանական ու գործնական ասպեկտների համալիր վերլուծությունն է, ինչպես նաև հայեցողության սահմանների հստակեցումն է՝ դրա որոշակիության և կանխատեսելիության ապահովելու նպատակով:

Այս նպատակի իրագործումը պահանջում է լուծել հետևյալ **խնդիրները**՝

-հետազոտել «հայեցողության սահմաններ» հասկացությունը, նրա իմաստային, գիտական և գործնական լրացման և իրավական այլ կատեգորիաների և սկզբունքների հետ նրա փոխկապվածության էվոյուցիան,

-կիրառելով համեմատական-իրավական մեթոդը՝ ցույց տալ հայեցողության դրսևորման առանձնահատկությունները «հին» ժողովրդավարության երկրների պրակտիկայում առկա դրսևորման ձևերի համեմատությամբ,

-բացահայտել զարգացման ուղղություններն ու միտումները և դիտարկել պետական մարմինների հայեցողության սահմանների ընդլայնման կամ նեղացման հեռանկարները՝ հաշվի առնելով Եվրոպական նախադեպային իրավունքում առկա առաջնահերթությունների վերլուծությունը,

-բնութագրել հայեցողության սահմանների տեսա-մեթոդաբանական հիմքերը,
-նորարարություններ մտցնել հայ իրավագիտությունում օգտագործվող հասկացության խնամքի մեջ, մասնավորապես, «հայեցողության սահմանների» բնութագրման առումով,

-վերլուծել «հայեցողություն», «հայեցողության ազատություն», «հայեցողության սահմաններ» հասկացությունը, հատկանիշները, տարատեսակները և յուրահատկությունը, վերհանել դրանց առավելություններն ու թերությունները,

-պատմական մեթոդի օգնությամբ հետազոտել «հայեցողության ազատության» սզկբունքի փոփոխման՝ ընդլայնման կամ նեղացման պատմությունը և հիմքերը՝ Եվրադատարանի նախադեպային իրավունքի զարգացման կոնտեքստում,

-հետազոտել, Եվրադատարանի նախադեպային իրավունքը անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքների իրացման, դրանց միջամտելու պետության իրավասության սահմանադրաիրավական և գործնական կողմերը,

-հետազոտել և համադրել Եվրադատարանի նախադեպային իրավունքը և Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան արդար դատաքննության իրավունքի երաշխավորման, դրա սահմանափակման պետության իրավասության սահմանադրաիրավական և գործնական հիմքերը:

Այս ամենի ուսումնասիրության առկա անբավարար մակարդակը դժվարացնում է Հայաստանի Հանրապետությունում անձի ազատության և անձեռնմխելիության, ինչպես արդար դատական քննության իրավունքների երաշխավորման պատճառ մակարդակ ապահովելու գործընթացը՝ դրանք Եվրոպական չափանիշներին առավելագույնս համապատասխանեցնելու տեսակետից: Հատկապես, որ ներպետական դատարանների հայեցողության սահմանների ճշգրտված և ոչ հստակ լինելը ուղղակի անկանխատեսելի և անորոշ է դարձնում այդ իրավունքներին միջամտելու աստիճանը, հիմքերն ու պայմանները քաղաքացիների համար:

Բերված հանգամանքները հրատապ են դարձնում արդար դատական քննության և անձի ազատության իրավունքները պաշտպանելու Հայաստանի Հանրապետության դատարանների հայեցողության դրսևորումների և դրանց սահմանների սահմանադրական- իրավական վերլուծության պահանջը, որը առաավել կանխատեսելի և որոշակի կդարձնի այդ իրավունքներին միջամտելու հիմքերը, պայմաններն ու աստիճանը: Նման հետազոտության արժեքը չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետության պրակտիկայով. այն օգտակար է Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում ընթացող մարդու իրավունքների պաշտպանությանն որակի կատարելագործման տեսակետից ևս:

Այս առնչությամբ առաջանում է անխուսափելի պահանջ՝ զարգացնելու հայեցողության դրսևորման կուտակված փորձը փորձը՝ միաժամանակ հաշվի առնելով, որ ներպետական դատարանների կողմից հայեցողության սահմաններից դուրս իրականացված միջամտությունը համապատասխան իրավունքների իրացմանը հանգեցնելու է երկրում մարդու իրավունքների համակարգային բնույթի խախտումներին:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը ոչ միայն կհանդիսանան գործնական ուղեցույց Հայաստանի Հանրապետության

դատավորների, քննիչների, դատախազների և փաստաբանների համար, այլև՝ մեթոդաբանական կուրսերի մեթոդաբանական նշանակություն անձի ազատության, արդար դատաքննության և, ընդհանրապես հայեցողության սահմաններին նվիրված հետազոտությունների համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը ամենից առաջ ինստիտուցիոնալ՝ համակարգային մոտեցումն է Եվրադատարանի և ՀՀ ներպետական դատարանների ակտերի նախադեպային իրավունի ձևավորման ու գործառնման տարբեր ասպեկտների վերլուծման նկատմամբ: Համակարգային մոտեցումը, իրականում, օգտակար է հասկացությային ապարատի վերլուծության, ինչպես նաև հայեցողության կիրառման հնարավորության և դրա սահմանների բնույթի ու էության բացահայտման ժամանակ, քանի որ հայեցողության սահմաններն առաջին հերթին պետական իշխանության մարմինների լիազորությունների և միմյանց միջև հարաբերությունների համակցված համակարգ է:

Պատմական մեթոդն անհրաժեշտ է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի էվոլյուցիայի ուսումնասիրության համար:

Տիպաբանական մեթոդը սույն ատենախոսության շրջանակներում կիրառվող ամենաեական մեթոդներից է: Հայեցողության սահմաններ՝ որպես ներպետական դատարանների կողմից արդարադատության իրականացման սկզբունքի դիտարկումն անհնար է առանց արդարադատության իրականացման այլ սկզբունքների՝ համաչափության, սուբսիդիարության և այլ սկզբունքների, գիտական տիպաբանության: Աշխատանքում կիրառվել են նաև տրամաբանական այլ մեթոդներ:

Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Հանձնաժողովի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային բնույթի որոշումներն ու վճիռները, Արդարադատության Եվրոպական դատարանի ակտերը, միջազգային նորմատիվ-իրավական մի շարք փաստաթղթեր:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը հայրենական գիտության մեջ անձի ազատության (Կոնվենցիայի 5-րդ հոդված), արդար դատական քննության (Կոնվենցիայի 6-րդ հոդված) և դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության դատարանների «հայեցողության սահմանների» կիրառման հիմնահարցերին նվիրված առաջին համալիր հետազոտությունն է:

Հետազոտության գիտական նորույթը, մասնավորապես, հետևյալում է՝

1. Աշխատանքում վերլուծության է ենթարկվել անձի անձեռնմխելիության իրավունքի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որը համադրվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների հետ՝ բացահայտելով և վերհանելով դրանց օրինաչափություններն ու կիրառման առանձնահատկությունները:

2. Աշխատանքում գիտական և գործնական մակարդակով քննարկման առարկա է դառնում և սահմանվում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների իրացմանը միջամտելու պետության թույլատրելիության հնարավորությունը: Քննարկվել և արվել են կոնկրետ

առաջարկություններ անձին ձեռքակալելիս և կալանավորելիս ՀՀ պետական մարմինների հայեցողության սահմանները կոնկրետ իրավիճակներում:

3. Աշխատանքում առաջին անգամ ամբողջական վերլուծվել է Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության և դրա յուրաքանչյուր բաղադրիչի կիրառման, ինչպես նաև՝ դրանք չկիրառելու բացառիկ դեպքերի հայեցողության հնարավորությունը և դրա սահմանները այն առումով, որ դրանք առավելագույն ապահովեն համապատասխանությունը Եվրոպական իրավական չափորոշիչներին:

Ատենախոսության մեջ կատարված համալիր և համակարգային հետազոտության և վերլուծության արդյունքում պաշտպանության է ներկայացվել տեսական ու կիրառական բնույթի երկու խումբ հիմնական դրույթները.

I. Եվրոպական իրավական պրակտիկայի, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համակարգային ու համալիր վերլուծության աղյուսների հիման վրա առաջ քաշված հայեցակարգային և գործնական նշանակություն ունեցող տեսական հիմնադրույթներ, որոնք կարող են օգտագործվել սահամանադրաիրավական ժամանակակից համակարգի կատարելագործման և բարեփոխման համար

1) Աշխատանքում՝ ելնելով սահմանադրական իրավունքի գիտության արդիականացման անհրաժեշտությունից, գիտական շրջանառության մեջ են դրվել «պետության հայեցողություն» և «պետության հայեցողության սահմաններ» եզրույթները և հիմնավորվել հեղինակային մոտեցումները այդ հասկացությունների բովանդակային նշանակության կապակցությամբ. եթե «պետության հայեցողությունը» պետության ներքին՝ սահմանադրական ընկալման տեսակետից և եվրոպական իրավական համակարգի համատեքստում անհրաժեշտ է բնութագրել որպես մարդու և քաղաքացու իրավունքների իրականացման նկատմամբ որևէ ձևով միջամտություն կիրառելու պետության հնարավորություն, ինչպես նաև անհատի և հասարակության շահերի հավասարակշռությունն ապահովելուն ուղղված պետության լիազորությունների համակցություն, ապա «պետության հայեցողության սահմաններ» հասկացությունը բնութագրվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին տրված հնարավորություն՝ որոշելու այդ հայեցողության սահմանները և գնահատելու ոչ միայն պետության գործողությունները ու վերջինիս կողմից իր լիազորությունների կատարման մակարդակը, այլև՝ երկարաժամկետ առումով կանխորոշելու և ուղղորդելու պետության իրավական քաղաքականության ուղղություններն ու իրավական կարգավորումների ներազդեցության կանոնները:

2) Հետազոտության արդյունքներով հիմնավորվել են պետության հայեցողության և դրա սահմանների կիրառական ու հիմնարար սկզբունքները: Արդյունքում կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ «օրենքի գերակայություն» և «իրավունքի գերակայություն» սկզբունքների՝ բովանդակային նշանակության և համակարգային առումներով, զուգակցումը՝ կոչված է ապահովելու պետության հայեցողության սահմանների կիրառման հնարավորությունը: Աշխատանքում այս

եզրահանգմամբ հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ եթե պետության հայեցողությունը տրված և երաշխավորված է օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան, ապա դրա սահմանները որոշվում և հստակեցվում են իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա:

3) Աշխատանքում բացահայտվել են այն «ուղեկցող» սկզբունքները որոնց միջոցով և շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանում է պետության հայեցողության սահմանների իրավական չափորոշիչները, ինչը կարևոր է Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառելիության ու իրացվելիության շրջանակների տեսանկյունից: Այսպես, ատենախոսությունում համակարգված տեսքով ներկայացնելով այդ սկզբունքներն ու դրանց վերլուծության արդյունքները, հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ պետության հայեցողության սահմանները չեն կարող ապահովել ինքնուրույն կիրառություն, եթե դրան չնախորդեն կամ առնվազն չզուգակցեն կոնվենցիոն համակարգի բաղկացուցիչ մաս կազմող այն սկզբունքների համալիրը, որոնց հիման վրա և շրջանակներում իրականացվում ու նախանշվում են այդ հայեցողության սահմանները:

Սույն հետազոտական աշխատանքի տրամաբանության շրջանակում խոսքը վերաբերում է հետևյալ սկզբունքներին՝ ա) կոնվենցիան «ապրող օրգանիզմ է» և պետք է մեկնաբանվի տվյալ պահին գործող իրավիճակի, այլ ոչ թե այն իրավիճակի համաձայն, որ առկա է եղել կոնվենցիայի ընդունման կամ նախագծման պահին, բ) կոնվենցիայի նորմերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ դրանցում պարունակող երաշխիքները լինեն «արդյունավետ» և ունենան «գործնական» նշանակություն, գ) կոնվենցիան պետք է մեկնաբանվի միջազգային իրավունքի նորմերի հետ ազգային օրենսդրության նորմերի ներդաշնակության հաշվառմամբ, դ) «սուբսիդիարությունը» կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների երաշխավորման տեսանկյունից, նախ և առաջ դիտարկվում է անդամ պետությունների պարտականություն, այլ ոչ թե՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի լիազորություն, ե) «չորրորդ աստիճան» որպես սկզբունք ունի հետևյալ բովանդակային նշանակությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չորրորդ աստիճան չէ ներպետական դատարանների նկատմամբ և չի կարող վերաքննություն կատարել և ոչ էլ բեկանել ներպետական դատական ակտերը, զ) «համաչափությունը» ըստ որի՝ պետության, հասարակության և անհատի շահերի միջև պետք է հաստատվի արդարություն կամ ողջամիտ հավասարակշռություն, է) «ապացոցման բեռի տեղաբաշխման» սկզբունքի կիրառմամբ դատարանը ազգային իշխանությունների վրա դնում է մարդու իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը ապացուցելու բեռը, կամ, հակառակը, պահանջում է դիմումատուից ժխտել այդ միջոցի անհրաժեշտությունը:

Աշխատանքում հաստատվել են այդ չափորոշիչների կիրառելիության և իրացվելիության հետևյալ շրջանակները. եթե կոնվենցիայի 5 և 6-րդ հոդվածների՝ արդար դատաքննությանը իրավունքի վերաբերյալ դրույթները պարունակում են այդ իրավունքին միջամտությունների և տրամադրվող երաշխիքների սպառիչ ցանկ, ինչը նշանակում է, որ դրանց համատեքստում պետությունների հայեցողության սահմանները լինում են խիստ սահմանափակ, ապա նույն կոնվենցիայի՝ անձնական

ազատություններին ու դրանց սահմանափակումներին (հոդվ. 8-11), խտրականության արգելքին (հոդվ. 14) և արտակարգ իրավիճակների պայմաններում պետության կողմից պարտավորություններից շեղման դեպքերին (հոդվ. 15) վերաբերող դրույթների շրջանակում հիշատակված սկզբունքներն ունեն լայն ու ամբողջական կիրառության շրջանակ:

4) Ատենախոսությունում հետազոտության արդյունքում տրվել են պետության հայեցողության և դրա սահմանների կայունության երաշխավորման չափորոշիչները, որոնց բովանդակային նշանակությունն ուղղված է՝ թե մարդու և քաղաքացու որ իրավունքների միջամտության և ազատությունների սահմանափակման դեպքերում և ինչ ծավալներով պետությունների համար կարող է կանխատեսելի լինել իրենց գործողությունների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատականը՝ նույն կոնվենցիոն կարգավորումների համատեքստում: Աշխատանքում բացահայտվել ու հիմնավորվել են գործերի այն շրջանակը, որոնց դեպքում դատարանը պետություններին վերապահում է հայեցողության լայն շրջանակ. դրանք են՝ ա) թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող գործեր, բ) կազմակերպված հանցավորությանը վերաբերող գործեր, գ) սհաբեկչությանը վերաբերող գործեր, դ) ազգային անվտանգությանը վերաբերող գործեր, ե) միգրացիոն վերահսկողությանը վերաբերող գործեր:

5) Աշխատանքում բացահայտվում են հայեցողության սահմանների կիրառման բացասական և դրական կողմերը՝ սահմանելով դրանց ազդեցությունը պետության հայեցողության դրսևորման հետևանքների և ժամանակակից սահմանադրաիրավական համակարգի արդիականացման ու զարգացումների համատեքստում: Վերլուծության արդյունքներով հիմնավորվել է այն թեզը, ըստ որի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրավաչափ համարվող պետության հայեցողության սահմանների կիրառման հիմնական թերությունն ու միաժամանակ, առավելությունը՝ այդ հայեցողության կանխատեսելիության բացակայությունն է, ինչը հնարավորություն չի ընձեռնում նախատեսել հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց իրավական կարգավորումների հստակ կառուցակարգեր (մեխանիզմներ):

6) Ատենախոսությունում համակարգված տեսքով հետազոտելով արդար դատաքննության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքի հարաբերակցության ու դրա իրականացման հիմնախնդիրները, հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ այդ իրավունքը ինստիտուցիոնալ առումով ընկալվում է որպես անձի իրավունքների պաշտպանության և վերականգման եղանակ, միջոց և վերջապես, երաշխիք, բայց ոչ, որպես մարդու և քաղաքացու սահմանադրական ինքնուրույն իրավունքի տեսակ:

1. Անձի ազատության և արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի տեսության ու համակարգի ծագման և կոնվենցիոն կարգավորումների ժամանակակից գործընթացները և օրինաչափությունները բացահայտող ու լուսաբանող հիմնադրույթներ.

1. Եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում ատենախոսությամբ հիմնավորվել և ձևակերպվել է պետության հայեցողության հայեցակարգը՝ անձի ազատության իրավունքի իրացման մեթոդաբանության և այդ իրավունքի իրացմանը միջամտելու պայմանների ընդգրկմամբ: Այսպես, աշխատանքում հիմնավորվում և առաջարկվում է անձի ազատության և անձեռնմխելիության վերաբերյալ ներպետական դատարանների հայեցողության սահմանափակման ընդհանուր բնույթի չափանիշների հետևյալ շրջանակը. որպեսզի անձին ազատությունից զրկելը համարվի Կոնվենցիայի շրջանակներում իրականացված և, հետևաբար, չխախտի այն, ապա պետության հայեցողությունը պետք է սահմանափակված լինի ոչ միայն «օրենքով սահմանված կարգով» սկզբունքի ձևական պահանջի պահպանմամբ, այլև այդ սահմանափակումը պետք է բովանդակային առումով համապատասխանի կոնվենցիոն այնպիսի չափանիշներին, ինչպիսիք են՝ ա) այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ նույն Կոնվենցիայի համատեքստում, բ) իրագործվի կամայականությունը բացառելու եղանակով, գ) պահպանված լինեն համաչափության կանոնները, դ) անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, ե) հետապնդի իրավաչափ նպատակ, զ) միայն օրենքի ձևական պահանջի պահպանումը բավարար չէ միջամտությունը կոնվենցիայի պահանջներին համահունչ համարելու տեսանկյունից:

2. Ատենախոսության մեջ Եվրոպական իրավական չափորոշիչների շրջանակում հիմնավորվում է «բերման ենթարկելու» ինստիտուտի բովանդակային նոր կիրառության անհրաժեշտությունը: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ անձին ազատությունից զրկելը բովանդակում է միայն անձին ձերբակալելը և կալանավորելը, իսկ բերման ենթարկելու մասին խոսք չի գնում, ուստի, ատենախոսությամբ հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի քրեական դատավարության օրենսդրության տրամաբանությամբ՝ բերման ենթարկելը ևս պետք է դիտարկել անձի ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում:

3. Աշխատանքում բացահայտվել է անձի ազատության իրավունքի սահմանադրական և կոնվենցիոն նորմերի իրացման հարցով Հայաստանի Հանրապետության ներպետական կարգավորումների միջև առկա հակասությունները, որոնց հաղթահարումը անխուսափելի է դառնում կոնվենցիոն չափանիշների ապահովման տեսանկյունից: Մասնավորապես խոսքը վերաբերում է ձերբակալվածին անհապաղ դատարան տանելու պարտավորությանը, երբ վարույթն իրականացնող մարմնին օրենքով նման լիազորությունը վերապահված չէ: Աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ ձերբակալվածի համար անձի ազատության իրավաչափ սահմանափակման միակ երաշխիքը դա ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատարան բողոքարկելու հնարավորությունն է, որը ներպետական օրենսդրությունում անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պատճառով համարժեք կիրառում չի ստացել, այսինքն՝ գործնականում կիրառելի չէ, ինչը նշանակում է, որ Կոնվենցիոն երաշխիքներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետությունում փաստացիորեն գոյություն չունի:

4. Անձի ազատության սահմանափակման սահմանադրաիրավական նոր կարգավորումների և Եվրոպական նախադեպային իրավունքի համատեքստում,

աշխատանքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն այն տեսանկյունից, որ՝ կալանավորման կիրառման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ 135-րդ հոդվածով սահմանված ընդհանուրից բացի մասնավոր հիմքեր չեն նախատեսվում: Այս առումով առաջարկվում է նույն օրենսգրքում սահմանել, որ խափանման այլ՝ ավելի մեղմ միջոցի կիրառման անհնարինության դեպքում կալանավորումը կարող է կիրառվել միայն միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ: Այդ դիրքորոշման շրջանակում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. անձի կալանավորման հիմքերն ուղղակիորեն նույնականացվել են խափանման այլ միջոցների հիմքերի հետ, ինչը նշանակում է, որ կալանավորման հիմքերը չեն կարող նույնական լինել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներից:

5. Ատենախոսությունում բացահայտվել է իրավահարաբերությունների այն շրջանակը, որի սահմաններում ակներև է դառնում արդար դատաքննության իրավունքի կոնվենցիոն կարգավորումների ներազդեցությունը: Հետազոտության առարկայի շրջանակում և ներպետական կարգավորման տեսակետից տրվում են իրավահարաբերությունները «քաղաքացիականի» դիտարկելու պետության հայեցողությունը բնութագրող հետևյալ չափանիշները՝ ա) որպեսզի գործը վերաբերի քաղաքացիական իրավունքի բնագավառին, ապա պետք է ելնել քննարկվող իրավունքի բնույթից. այն է՝ կարևոր չէ, թե ներպետական օրենսդրության որ ճյուղով է այդ իրավունքը սահմանված, այլ կարևորն այն է, թե այդ իրավունքի սահմանափակումը կարող է հանգեցնել Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի խախտման: բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ մասնավոր անձանց իրավունքները՝ միմյանց միջև փոխհարաբերություններում, օրինակ՝ պայմանագրային իրավունքի, առևտրային իրավունքի, քաղաքացիաիրավական օրինախախտման, ընտանեկան իրավունքի, աշխատանքային իրավունքի և գույքային իրավունքի համակարգում, միշտ հանդիսանում են քաղաքացիական բնույթի իրավունքներ:

Աշխատանքի տեսական ու պրակտիկ կարևորությունը: Ատենախոսության տեսա-գործնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության և հատկապես դատարանների հայեցողության դրսևորման և դրա սահմանների ճշգրտման եղանակների վերլուծության և վերհանման, Հայաստանի Հանրապետությունում անձի ազատության և արդար դատաքննության կոնվենցիոն իրավունքների երաշխավորման իրավական համակարգի կայացման առանձնահատկությունների հետազոտման մեջ է:

Ատենախոսության մեջ հատուկ ուշադրության է արժանացել անձին ձեռքակալելու, կալանավորելու, արդար դատաքննության ապահովման չափանիշներին, ինչպես առանձին հատկանիշների, այնպես էլ՝ դրանց համակցության դրսևորմամբ իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման, սահմանադրական մարմինների լիազորությունների իրականացման արդյունավետության բարձրացման հարցերին:

Աշխատանքում բովանդակված դրույթները, հետևություններն ու առաջարկությունները՝ կապված Հայաստանի Հանրապետության պետական-

իրավական և դատա-իրավական զարգացման արդի հարցերի հետ, ձևավորում են անհրաժեշտ տեսական բազա Հայաստանի Հանրապետությունում պետության հայեցողության և դրա սահմանների համակարգի կատարելագործման պրակտիկ միջոցառումների հիմնավորման համար:

Ատենախոսության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները կարող են կիրառվել և կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում անձի ազատության և անձեռնմխելիության, ինչպես նաև՝ արդար դատաքնության իրավունքների երաշխավորման գործընթացում՝ դրանք Եվրոպական Կոնվենցիայի չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված Հայաստանի ներպետական կարգավորող օրենսդրության և դատական պրակտիկայի հետագա կատարելագործման համար: Սույն հետազոտության արդյունքները կիրառելի են իրավաբանական մի շարք գիտակարգերի կողմից՝ պետության և իրավունքի տեսություն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք, համեմատական սահմանադրական իրավունք, եվրոպական իրավունք և եվրոպական նախադեպային իրավունք, ինչպես նաև այս համակարգերին վերաբերող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական աշխատանքների պատրաստման համար:

Ատենախոսական հետազոտությունը կարող է օգտագործվել նաև պետության և իրավունքի, սահմանադրական, միջազգային, վարչական իրավունքի տեսության, եվրոպական նախադեպային իրավունքի մի շարք այլ գիտաձյուղերի դասավանդման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը (սպորադիկ): Ներկայացված մշակումները կիրառություն են գտել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված հայցերով պետության շահերի պաշտպանությունը կազմակերպելու, համապատասխան դիրքորոշումների նախապատրաստման և Եվրադատարան ներկայացնելու ժամանակ: Հետազոտությունների նյութերը օգտագործվել են ինչպես գործնականում, այնպես էլ՝ գիտական համաժողովների ելույթներում, տպագրված հոդվածներում ու հրապարակումներում, դասախոսությունների ժամանակ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը և կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքի կառուցվածքն արտացոլում է հետազոտության տրամաբանությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են տասնվեց պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկից:

Ներածության մեջ հեղինակը ներկայացնում է ընտրված թեմայի արդիականությունն ու ուսումնասիրման հրատապությունը, հիմնավորում պետության հայեցողության և դրա սահմանների հստակեցման և որոշակիացման անհրաժեշտությունը: Ներածության մեջ ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, նորմատիվ, փորձառնական,

մեթոդոլոգիական հիմքերը, նպատակը և խնդիրները: Ձևակերպվում է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, նշվում է ուսումնասիրության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է «Պետության հայեցողություն և հայեցողության սահմաններ հասկացությունը, դրանց էությունն ու բովանդակությունը», բաղկացած է հինգ պարագրաֆից:

«Պետության հայեցողության և դրա սահմանների իրավական բովանդակության հիմնախնդիրները Եվրոպական կոնվենցիոն կարգավորումների համատեքստում» վերտառությամբ առաջին պարագրաֆում հեղինակը քննարկում է Եվրոպական կոնվենցիայի կարգավորման մեխանիզմների համատեքստում «հայեցողության սահմանների» հասկացության դերն ու նշանակությունը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի հիմնական առաքելությունն է ապահովել Կոնվենցիայի անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը: Այս առաքելությունը հաջողությամբ իրականացնելու համար Եվրոպական դատարանը պարտավոր է Եվրոպայի խորհրդի անդամ 47 պետությունների դեմ բերված գանգատներով կիրառել Կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության միատեսակ չափանիշներ: Կոնվենցիան որևէ տարբերակված մոտեցում չի նախատեսում անդամ որևէ պետության համար՝ կապված կոնվենցիայով ամրագրված իրավունքների կամ ազատությունների պաշտպանության հետ: Սակայն մյուս կողմից անհնար է հաշվի չառնել այն հանգամանքը, որ ներկա պահին Եվրոպայի խորհրդի անդամ են 47 պետություն, հետևաբար՝ Դատարանը գործ ունի 47 տարբեր պետությունների հետ, իրենց ուրույն իրավական, կրոնական, սոցիալ-տնտեսական, սովորույթային, ժողովրդագրական, ժողովրդավարական և այլ առանձնահատկություններով, և որ առանց այս առանձնահատկությունները հաշվի առնելու անհնար կլինի ապահովել Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների պատշաճ պաշտպանությունը Կոնվենցիայի անդամ բոլոր պետություններում:

Եվրոպական դատարանի առաքելությունն է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն իրականացնել՝ մի կողմից հաշվի առնելով պետությունների ինքնիշխանությունը, մյուս կողմից ամրագրված իրավունքների համընդհանուր բնույթը և, վերջապես, երրորդ կողմից՝ Կոնվենցիայի անդամ-պետությունների առանձնահատկությունները: Նշված «եռանկյունու» սահմաններում արդյունավետ գործունեություն իրականացնելու և Կոնվենցիայի պաշտպանի իր առաքելությունը պատշաճ իրականացնելու համար Դատարանն իր նախադեպային իրավունքի միջոցով կիրառության մեջ է դրել և տասնամյակներ շարունակ հաջողությամբ կիրառում է մի շարք իրավական գործիքներ և սկզբունքներ: Այս գործիքներից մեկն էլ՝ պետության հայեցողության սահմաններ սկզբունքն է:

Հեղինակը քննարկվող ինստիտուտի էությունը պարզելու համար ճշգրտում է մտցնում դրա լեզվաբանական, սպա լեզվատրամաբանական, այնուհետև՝ իրավաբանական էության մեջ, քանի որ բացառապես այդ դեպքում հնարավորություն կընձեռվի պարզելու դրա գործնական-կիրառական նշանակությունը և բացահայտել էությունը:

Սահմանելով լեզվատրամանական մոտեցումը, քննարկման առարկա է դարձվում նաև խնդրո առարկա հասկացության իրավաբանական սահմանումը:

Ամփոփելով հայեցողության սահմաններ հասկացության վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև, վերհանելով խնդրո առարկա ինստիտուտի համակարգային և ֆունկցիոնալ վերլուծության արդյունքները, Հեղինակը հայեցողության սահմաններ հասկացությունը բնութագրում է որպես անհատի և հասարակության շահերի հավասարակշռությունն ապահովելուն ուղղված պետության լիազորությունների համակցություն, որի սահմանները որոշվում են մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից:

«Պետության հայեցողության սահմանների գործառնությանն նշանակությունը և կիրառման չափանիշները» վերնագրված երկրորդ պարագրաֆում հեղինակը քննարկում է հայեցողության սահմանների կիրառումը, նշելով, որ հայեցողության սահմանների կիրառումը ուղեկցվում է մի շարք չափանիշների գործադրմամբ, որոնցից յուրաքանչյուրն, առանձին-առանձին, հանդիսանում են Դատարանի գործունեության կարևորագույն դրսևորում, բայց միաժամանակ, իրենց համակցության մեջ կանխորոշում են Դատարանի կողմից գործերի քննության և կոնվենցիոն իրավունքի ներդրման օրինաչափությունները: Այսինքն, հայեցողության սահմանները չեն կարող ապահովել ինքնուրույն կիրառություն, եթե դրան չնախորդեն կամ առնվազն չզուգակցեն կոնվենցիոն համակարգի բաղկացուցիչ մաս կազմող մի շարք սկզբունքներ:

Չափազանց կարևոր նշանակություն ունի հայեցողության սահմանների և համաչափության սկզբունքի հարաբերակցության հարցերը: Մի կողմից՝ հայեցողության սահմաններ հասկացությունն օգտագործվում է՝ ցույց տալու հայեցողության այն չափանիշները, որոնք թույլատրվում են պետություններին, այն կերպ, ինչպես նրանք իրականացնում են Կոնվենցիայի ստանդարտները՝ հաշվի առնելով իրենց ազգային առանձնահատուկ հանգամանքներն ու պայմանները: Մյուս կողմից համաչափության սկզբունքը մշակվել է՝ զսպելու անհատ մարդկանց իրավունքները խախտելու պետական մարմինների իշխանությունը, և հետևաբար, այն պետք է դիտվի որպես անհատի ինքնավարության պահպանման միջոց:

Երրորդ պարագրաֆում՝ **«Պետության հայեցողությունը և դրա իրավական սահմանների կիրառման կայունության երաշխավորումը»** հեղինակը քննարկում է հայեցողության սահմանների կիրառման կայունությանը առնչվող հարցեր, նշելով, որ հայեցողության սահմաններ սկզբունքի, գործառնությանն տեսակետից վերլուծության ժամանակ, կարևորագույն հարցը, այնուամենայնիվ, կայանում է պետության հայեցողության սահմանների վերաբերյալ հարցի պատասխանը: Դատարանի պրակտիկայում դատողություններն այն մասին, թե արդյոք խախտվել են պետության հայեցողության սահմանները, հաճախ դառնում են ժողովրդավարական հասարակությունում տվյալ միջոցների անհրաժեշտության մասին հարցի պատասխանը, ինչը և որոշում է գործի ելքը: Մակայն պետք է նկատել, որ հայեցողության ազատության ընդհանուր, միասնական, հստակ սահմանված սահմաններ գոյություն չունեն: Հայեցողության սահմանները ստատիկ վիճակ չեն և աչքի չեն ընկնում կայունությամբ, ինչը մշտապես անորոշություն է առաջացնում ներպետական իրավակիրառ մարմինների մոտ:

Կատարված վերլուծության արդյունքում հատկապես կարևոր է դառնում պետությունների հայեցողության սահմաններն որոշելիս, գնահատել, ինչ չափով և ինչ չափանիշների հաշվառմամբ է պետությունների հայեցողության սահմանները դառնում առնվազն կանխատեսելի հենց պետությունների համար: Ի հարկե, Դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավական համակարգն, ըստ էության, պետություններին հնարավորություն է տալիս որոշակիորեն կանխատեսել իրավունքի իրացման միջամտության հնարավորությունը և միջամտության սահմանները: Այնուամենայնիվ, Դատարանի կողմից իր նախադեպային իրավունքով ձևավորված կոնվենցիոն համակարգը, մեր գնահատմամբ, բավարար հնարավորություն չի տալիս մասնակից պետություններին կազմակերպելու և որոշակիությամբ կանխատեսելու իրենց միջամտության հետևանքները:

Հեղինակը եզրակացնում է, որ «Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է» սկզբունքը, իր հիմքում ունենալով Անդամ պետությունների միջև «կոնսենսուսի» առկայությունը, հիմք է հանդիսանում պետությունների հայեցողության սահմանները անորոշ և անկանխատեսելի դարձնելու համար:

«Պետության հայեցողության դրսևորումները և դրա սահմանների իրավական չափորոշիչները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարգավորումների համատեքստում» վերնագրված չորրորդ պարբերությունում հեղինակը քննարկում է հայեցողության սահմանների իրավական չափորոշիչները: Պետության հայեցողության սահմաններ սկզբունքը ինչպես մի շարք այլ սկզբունքներ, չի հիշատակվում կոնվենցիայի որևէ հոդվածում: Պետության հայեցողության սահմաններ սկզբունքը Դատարանի կողմից սկսել է կիրառվել դեռևս 1950-ական թվականներից: Սկզբնական շրջանում սկզբունքը Հանձնաժողովի և Դատարանի կողմից կիրառվել է բացառապես այն գործերի շրջանակներում, որտեղ պատասխանող պետությունը վկայակոչել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածով իրեն իրավունք վերապահված պարտավորություններից շեղվելու հնարավորությունը: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ պետության հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառումը կամ գոնե դրա քննարկումը Եվրոպական դատարանի հենց առաջին գործերից սկսած վկայում է այն մասին, որ հենց առաջին գանգատների քննության ընթացքում Դատարանը հասկանում է, որ ելնելով Կոնվենցիայի բնույթից, այն չի կարող իր վրա վերցնել բոլոր հարցերում որոշում կայացնելու մենաշնորհը:

Դատարանի գործունեության վաղ շրջանում արդեն ակնհայտ է, որ բախվելով բազմաբնույթ և բազմաշերտ հասարակություններում մարդու իրավունքների համընդհանուր չափանիշներ հաստատելու խնդրին, խորապես ըմբռնել է, որ անխուսափելիորեն առաջանում են հարցեր, որոնց պատասխանը կարող է տրվել միայն անդամ պետությունների իշխանությունների կողմից: Այս առումով, Դատարանը նաև գիտակցում է, որ պետության կողմից իր հայեցողության սահմաններում իրականացված գործողությունների կոնվենցիային համապատասխանության հարցն է այն գործառույթը, որ պետք է կատարի Դատարանը, որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգայի կոնվենցիայի երաշխավոր:

Հեղինակը եզրակացնում է, որ միջազգային իրավունքի նորմերի ոչ միանշանակ մեկնաբանությանը և կիրառությանը հավանություն տվող հայեցողության սահմանների

սկզբունքի դրույթների օգտագործումը թույլ է տալիս միջազգային հարաբերությունների շրջանակներում որոշումների ընդունման ընթացակարգին տալ առավել ժողովրդավարական բնույթ և միաժամանակ մոտեցնել իրավունքի նորմը իրականությունը, քանի որ հենց իրավասու ներպետական մարմինները կարող են ճիշտ ու արդյունավետ կիրառել այս կամ այն նորմը կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ: Ընդորում, սկզբունքը կիրառվում է միայն այն նորմերի նկատմամբ, որոնք ենթադրում են կամ ունակ են թույլատրել ոչ միանշանակ մեկնաբանություն, այն է՝ գնահատողական բնույթի նորմեր, լիազորություն տվող կամ հետևանքներ ենթադրող նորմեր:

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության և պետության իրավական համակարգում հայեցողության սահմանների կիրառման ազդեցության գնահատումը:» պարագրաֆում փորձ է կատարվել գնահատելու Հայեցության սահմաններ սկզբունքի կիրառման բացասական և դրական կողմերը: Սակայն հեղինակը եզրակացնում է, որ պետք է հաշվի առնել, որ դրական կամ բացասական ազդեցությունը խիստ հարաբերական մոտեցում է, քանի որ կախված է նրանից, թե որ տեսանկյունից է հարցը քննարկվում: Գնահատման առումով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե ազդեցության գնահատումը արվում է պետության ինքնուրույնության առավելագույնս պահպանման, թե՝ միջազգային իրավական համակարգի զարգացման և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրային մակարդակում կատարելագործման տեսանկյունից:

Հայեցողության սահմաններ սկզբունքի էությունը հիմնականում դիտվում է պետությունների կողմից միջազգային պայմանագրի միևնույն դրույթների ոչ միատեսակ կիրառման հնարավորության մեջ: Այսինքն, կոնվենցիոն դրույթները մեկնաբանելու և կիրառելու պայմաններում, անգամ եթե դրանով շեղվում են պայմանագրի պահանջներից, պետությունները դրանով իսկ գործելով իրենց հայեցողության ազատության սահմաններում, չեն ճանաչվում, որպես պայմանագիրը խախտող, այն դեպքում, երբ նույն կամ նմանատիպ հանգամանքների պայմաններում, այլ պետությունը կարող է Դատարանի կողմից ճանաչվել կոնվենցիոն դրույթները խախտող:

Հայեցողության սահմանների սկզբունքի կիրառումը համապատասխանում է միջազգային պայմանագրի երկարաժամկետ կենսունակության ապահովման անհրաժեշտությամբ, որն առաջացել է պայմանավորվող պետությունների էական մշակութային ու իրավական, կրոնական և սովորութային տարբերությունների պատճառով: Ավելին, պետությանը հայեցողության որոշակի սահմանների վերապահումը անհրաժեշտ է միջազգային պայմանագրի այս կամ այն նորմի երկարաժամկետ կիրառման համար՝ նկատի ունենալով, որ հնարավոր չէ միջազգային պայմանագրով նախատեսել հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց փոփոխվող իրավական կարգավորման մեխանիզմներ: Այդ դեպքում հայեցողության ազատությունը թույլ կտար պետություններին հասարակական հարաբերություններին ներգործել ժամանակին գուզընթաց՝ դրանով իսկ չխախտելով ստանձնած միջազգային պարտավորությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է *«Հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառումը անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքների պաշտպանության համատեքստում»*, բաղկացած է ինը պարագրաֆից:

«Հայեցողության սահմանների կիրառման ընդհանուր պայմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով» վերտառությամբ առաջին պարագրաֆում հեղինակը քննարկում է հայեցողության սահմանների կիրառումը կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում, նշելով, որ Կոնվենցիայի իմաստի ներքո՝ այդ անձնական անձեռնմխելիության իրավունքն առաջնային կարևորություն ունի «ժողովրդավարական հասարակության» մեջ: Բոլոր անձինք օժտված են այդ իրավունքի պաշտպանությամբ, այն է՝ զրկված չլինելու, կամ չշարունակվելու լինել զրկված, իրենց ազատությունից՝ բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների: Ընդ որում, 5-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ազատության իրավունքի բացառությունների շարքը սպառիչ է և ընդլայնման ենթակա չէ նաև ներպետական օրենսդրությամբ, և այդ պայմանների միայն սահմանափակ մենաբանությունն է համապատասխանում այդ դրույթի նպատակներին:

Ցանկացած ազատագրվում, (ա)-(գ) ենթակետերի մեջ ամրագրված պայմաններին բավարարելու հետ միասին, պետք է նաև լինի «օրինական»: Այն ժամանակ, երբ կալանավորման «օրինականության» հարց է բարձրացված, ներառյալ «օրենքով սահմանված կարգով» լինելու հարցը, Կոնվենցիան հիմնականում հիմնվում է ներպետական օրենսդրության վրա և ամրագրում ներպետական օրենսդրության նյութաիրավական և ընթացակարգային կանոններին ենթարկվելու պարտավորություն:

Ազատության ցանկացած զրկումը պետք է իրականացվի պետության ներքին օրենսդրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների խիստ համապատասխան, այսինքն՝ անհրաժեշտ է պահպանել 5-րդ հոդվածի կոնկրետ պահանջները, եթե անգամ դրանք նախատեսված չեն ներպետական իրավունքով:

Աշխատության այս գլխում նպատակ է դրվել Հոդված 5-ի համատեքստում հայեցողության սահմանների կիրառության հիմքում ընկած հիմնավորումները սահմանելիս և քննական վերլուծության ենթարկելիս որոշարկել այն ձևերը, որով Ստրասբուրգի մարմինները կիրառում են մի շարք սկզբունքներ գնահատելու համար հայեցողության սահմանների տարբերակները: Նրանց բացահայտ հղումը հայեցողության ազատության սահմաններին հիմնականում չի սահմանափակվում է այն գործերով, որոնք վերաբերում են հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց: Սակայն, հարկ է նշել, որ շատ դեպքերում նրանք ենթադրում են ազգային հայեցողություն, պնդելով, որ իրենց խնդիրն էր «սահմանափակել վերանայելով, ըստ Կոնվենցիայի, ազգային իշխանությունների կողմից ընդունված որոշումները»:

Այս գլխում ուսումնասիրվում է նաև, թե արդյոք Դատարանի իրավասությունն է քննարկել ազատությունից զրկելու գործի նյութերի խիստ քննությամբ, անկասկած հայտնել անհամաձայնություն ազգային իշխանությունների արդյունքների հետ, կամ զսպել ակտերի վերանայման իրենց լիազորությունը հայեցողության սահմանների քողի տակ:

«Ազատությունից զրկելու եղանակների տարբերությամբ պայմանավորված հայեցողության սահմանները» վերնագրված երկրորդ պարագրաֆում հեղինակը

քննարկում է թե ի՞նչն է համարվում ազատագրկում (ձերբակալման կամ կալանավորման միջոցով), քանի որ դրա սկսվելու պահից գործողության մեջ են մտնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները: Կարող են առաջանալ իրավիճակներ, երբ որևէ մեկը զրկվի ազատությունից, սակայն այդ զրկման համար պատասխանատու անձանց կողմից այն համապատասխան ձևով չընկալվի, և անձը ձեռք չբերի իրավասուբյեկտություն այդ իրավիճակին համապատասխան հատկապես, եթե դրան չզուգորդվի ֆիզիկական որևէ սահմանափակում: Նման դատողությունները հատկապես անհրաժեշտ են ազատությունից զրկելու համար պատասխանատու անձանց, քանի որ երբեմն ազատությունից զրկելու սահմաններն ու ժամկետները բավականին անորոշ են:

5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության և անվտանգության իրավունքը, նախատեսում է պահանջները, որոնք պետք է պահպանվեն երբ անձը կալանավորվում կամ ձերբակալվում է: Այն արգելում է անձին ազատությունից և անվտանգությունից զրկելը արտադատական կարգով: Որևէ մեկը չի կարող ձերբակալվել առանց օրենքի տառին համապատասխանության, իսկ օրենքը պետք է համապատասխանի եվրոպական նվազագույն ստանդարտներին: Դատարանն ընդգծում է, որ ազատության իրավունքը համարվում է ժողովրդավարական հասարակության ամենակարևոր իրավունքներից մեկը: Ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կարող է հիմնավորվել միայն, եթե դրանք համապատասխան են դատավարական և հիմնարար օրենքներին և իրագործվեն 5-րդ հոդվածի 1-ին մասում ներկայացված վեց օրինական նպատակներից մեկի համաձայն: Այդ սահմանափակող կատեգորիաների ցանկը պետք է դիտվի սպառիչ, ելնելով տվյալ հոդվածի հետևյալ ձևակերպումից՝ «այլ կերպ, քան հետևյալ դեպքերում», իսկ այդ իրավունքների սահմանափակումները, որպես ընդհանուր կանոն, պետք է մեկնաբանվեն նեղ և ուղիղ իմաստներով:

«Հայեցողության դրսևկորումները եվ դրա սահմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով» պարագրաֆում հեղինակը նշում է, որ չնայած օրինական նպատակների սպառիչ ցանկի առկայությանը՝ կալանավորելու և ձերբակալելու հանգեցրած պայմանների գնահատումը պահանջում է որոշակի հանգամանքների մանրամասն իմացություն: Գործին անմիջական ծանոթ լինելու և դրա հետ անմիջական կապի շնորհիվ ներպետական իշխանություններն ավելի լավ դիրքում են ապացույցները գնահատելու համար, իսկ Դատարանի դերակատարություն սահմանափակվում է ներպետական իշխանությունների որոշումների նկատմամբ այս առնչությամբ վերհսկողություն իրականացնելու մեջ: Որոշ դատավարական պահանջների անորոշությունն ու վերացականությունը, ինչպիսիք են արագությունն ու ժամանակի ողջամիտ սահմանափակումը նախատեսում են հիմնավորումներ համապատասխան քաղաքականության համար, քանի դեռ հնարավոր չէ ձևակերպել հստակ ժամանակահատված օրինական կալանավորման կամ ձերբակալման համար:

Այս պարագրաֆը նպատակ ունի 5-րդ հոդվածի համատեքստում հայեցողության սահմանների կիրառության հիմքում ընկած հիմնավորումները սահմանելիս և վերլուծության ենթարկելիս որոշակիացնել այն ձևերը, որով Դատարանը կիրառում է մի շարք սկզբունքներ, իրավակիրատ մարմինների հայեցողության սահմանները գնահատելու համար: Նրանց բացահայտ հղումը հայեցողության սահմաններին

հիմնականում սահմանափակվում է այն գործերով, որոնք վերաբերում են հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց:

«Հայեցողության դրսևվորումները եվ դրա սահմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով» վերնագրված պարագրաֆում հեղինակը քննարկում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասն ազատությունից զրկելու լիազորության չարաշահման դեմ կարևոր երաշխիքը: Յուրաքանչյուր ձերբակալվածի անմիջապես, նրան հասկանալի լեզվով տեղեկացվում է ձերբակալման պատճառի և առաջադրվող մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված անձը պետք է գիտակցի, թե իր հետ ինչ է կատարվում, և մտածի, թե ինչպես պատշաճ կերպով բողոքարկի այդ գործողությունը, ինչը շատ դեպքերում նպաստում է, որպեսզի պետական ծառայողները խուսափեն անօրինական (չարդարացված) գործողություններից: Ազատությունից զրկելու պատճառները (կամ դրանց բացակայությունը) արդյունքում կարևոր հանգամանք են հանդիսանում ազատագրկման թույլատրելիությունը որոշող դատական մարմնի համար:

«Հայեցողության դրսևվորումները եվ դրա սահմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով» վերնագրված հինգերորդ պարագրաֆում հեղինակը քննարկում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված մի շարք կարևոր երաշխիքներ: Այդ կետի նպատակն է, որ ազատագրվումը լինի ընդհանուր կանոնից բացառություն, և որ դատական հսկողություն իրականացվի ձերբակալման և կալանավորման նկատմամբ: Դա վերաբերում է միայն 5-րդ հոդվածի 1-ին կետի “c” ենթակետով նախատեսված ձերբակալմանը: Այն պահանջում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձը, համաձայն 1-ին կետի “c” ենթակետի, ներկայացվի դատավորին կամ օրենքով լիազորված դատական գործառույթներ իրականացնող պաշտոնատար այլ անձի: Այն պարագայում, երբ “դատավոր” տերմինը կասկած չի հարուցում, “օրենքով լիազորված” դատական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ” հասկացությունը Եվրոդատարանին ստիպել է որոշակիացնել այդ “պաշտոնատար անձին”, որը դատավոր չէ, այլ ինչ-որ այլ անձ:

«Հայեցողության դրսևվորումները եվ դրա սահմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով» վերնագրված վեցերորդ պարագրաֆում հեղինակը քննարկում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը համաձայն որի՝ կալանավորված անձին երաշխավորում է կալանավորման օրինականության վերաբերյալ դիմում ներկայացնել դատարան, վերջինս անհապաղ պետք է որոշում կայացնի և հրաման արձակի ազատման վերաբերյալ, եթե կալանավորումն անօրինական է: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջն է, որ այս կամ այն անձի կալանավորման օրինականությունն ստուգելու համար անհրաժեշտ են երաշխիքներ, ինչպիսիք են habeas corpus-ի երաշխիքները: Այդ դրույթից բխող պարտավորությունը ներառում է վերահսկողության չորս հիմնական տարրերը՝ գործի քննարկումը դատարանի կողմից, կողմերի վիճաբանությունները՝ իրավաբանական օգնության ապահովմամբ և մրցակցության սկզբունքի պահպանմամբ, կալանավորման օրինականության քննարկումը՝ ամենալայն իմաստով, և այդ գործողությունների անհապաղությունը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետից բխող պարտավորությունն իրականացվում է անկախ կալանավորման հիմքից: Ազգային մարմինները պետք է ա-

պահովեն ցանկացած գործով դատարան դիմելու հնարավորությունը՝ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետում հստակ նշված է, որ այդ հարցը պետք է լուծվի դատարանում՝ դատախազի միջոցով ցանկացած բանավեճ դրա լուծման բացառմամբ:

Եվրոպական դատարանը 5-րդ հոդվածի առնչությամբ մշտապես կիրառել է պետության իրականացրած գործողությունների մանրամասն ստուգման քաղաքականություն, հաշվի առնելով հոդված 5-ի հատուկ կարևորությունը: Օրինակ Դատարանը հաստատել է չափազանց խիստ չափանիշներ կապված 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «անհապաղ որոշման» պահանջի հետ:

«Հայեցողության դրսևկորումները եվ դրա սահմանները կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով» վերնագրված յոթերորդ պարագրաֆում հեղինակը նշում է որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը պահանջում է, որ ձեռքբերության կամ կալանավորման զոհ դարձած անձինք այդ հոդվածի դրույթների խախտման դեպքում փոխհատուցման իրավունք ունենան: Ինչպես և 5-րդ հոդվածի 4-րդ կետում, այդ դրույթը հանդիսանում է Կոնվենցիայի 13 հոդվածի ավելի ընդհանուր պարտավորության կոնկրետացում, որի համաձայն՝ երաշխավորված ցանկացած իրավունքի և ազատության խախտման դեպքում անձն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի պայմանները պետությանը փոխհատուցման տեսքով իրավական պաշտպանություն տրամադրող մարմնի ընտրության հարցում ազատություն չեն տալիս: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը պահանջում է նման միջոցի տրամադրում դատարանի կողմից, ինչը նշանակում է այդ հարցով պարտադիր ուժ ունեցող որոշման ընդունում: Ինչ վերաբերում է փոխհատուցման իրավունքի պաշտպանության դատաիրավական կարգին, ապա ներպետական իշխանությունները բավականին ազատություն ունեն: Իրավական պաշտպանության միջոցի տրամադրումն այլ մարմինների կողմից (օրինակ՝ օմբուդսմենի) կամ կառավարության կողմից ex gratia-ի վճարումը բավարար չեն 5-րդ հոդվածի 5-րդ կետի նպատակների համար:

Վնասի փոխհատուցումը, ըստ 5-րդ հոդվածի 5-րդ կետի, պահանջվում է միայն այն դեպքերում, երբ ենթադրվող զոհի ձեռքբերումը կամ կալանավորումը խախտել է 5-րդ հոդվածի 1-4 կետերը:

«Հայեցողության ընդլայնված սահմանները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման կոնտեքստում» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը եզրակացնում է, որ գործի թերությունը, որը ներառում է բացահայտ հղում հայեցողության ազատության սահմաններին ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, դժվարացնում է հայեցողության սահմանների շրջանակների վճռորոշ գործոնների կամ ցուցանիշների սահմանումը: Սակայն, նախադեպային իրավունքի հետազոտությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայությունը, հոգեկան հիվանդության գնահատումը և ռեցեդիվիստների պայմանական վաղաժամկետ ազատ արձակման մերժման անհրաժեշտությունը կոնկրետ գործոններ են, ըստ երևույթին 5-րդ հոդվածի իմաստով հայեցողության սահմաններն ընդլայնելու համար: Ինչպես և այլ դրույթներում, ազգային

անվտանգության քննարկումներում կամ հանցագործության կանխարգելումը ներկայացնում է հայեցողության շրջանակները լայնացնող ընդհանուր գործոն:

«Եվրոպական դատական պրակտիկան Հայաստանի վերաբերյալ գործերով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման համատեքստում:» պարագրաֆում հեղինակը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիմքերով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ գործերով Դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը առաջադրում է մի քանի օրինաչափություններ, որոնք համադրելով Դատարանի ընդհանուր նախադեպային իրավունքի դրույթների հետ, ուրվագծում են ՀՀ ներպետական դատարանների հայեցողության սահմանները:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է **«Հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառումը արդար դատաքննության իրավունքների պաշտպանության համատեքստում»**, բաղկացած է ութ պարագրաֆից:

«Քաղաքացիական և քրեական իրավունքներ սահմանելու հայեցողության սահմանները» վերտառությամբ առաջին պարագրաֆում հեղինակը քննարկում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ընդգրկված օբյեկտիվ դատաքննության հիմնական իրավունքը: Հաշվի առնելով մեղադրյալի իրավունքների ապահովման գերակա անհրաժեշտությունը, բնական է, որ Դատարանը ուսումնասիրում է քրեական գործերն ավելի խստորեն և մանրամասն, քան քաղաքացիական գործերը: Նրանք բացահայտ ընդունել են պետությունների հայեցողության «ավելի ընդարձակ» լինելը քաղաքացիական գործերով օբյեկտիվ դատավարության համար անհրաժեշտ պայմաններն ու ժամկետները կարգավորելու առնչությամբ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում արդար դատաքննության հասկացության հիմքում, ըստ էության, ընկած է միջոցների հավասարության սկզբունքը:

Քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը յուրաքանչյուր մարդու համար երաշխավորում է արդարացի դատական քննության իրավունքը, հետևաբար դա վերաբերում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ՝ քրեական իրավունքներին: Որպեսզի գործը վերաբերի քաղաքացիական իրավունքի բնագավառին, պետք է ելնել քննարկվող իրավունքի բնույթից. կարևոր չէ, թե ներպետական օրենսդրության որ ճյուղով է այդ իրավունքը սահմանված: Կարևորն այս պարագայում այն է, որ այդ իրավունքի սահմանափակումը կարող է հանգեցնել Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի խախտման: Դատարանը մի շարք դեպքերում նշել է, որ մասնավոր անձանց իրավունքները՝ միմյանց միջև փոխհարաբերություններում, օրինակ՝ պայմանագրային իրավունքի, առևտրային իրավունքի, քաղաքացիաիրավական օրինախախտման, ընտանեկան իրավունքի, աշխատանքային իրավունքին գույքային իրավունքի համակարգում, միշտ հանդիսանում են քաղաքացիական բնույթի իրավունքներ:

Հեղինակն ընդգծում է, որ անձի որոշ իրավունքների պաշտպանությունը քրեական դատավարությունում նույնպես իրականացվում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների իրականացման համատեքստում: Դրանք այն դեպքերն են, երբ խախտվել են անձի (տուժողի)՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, կամ քրեական գործով վարույթը կարճվել է արդարացման հիմքով, կամ կայացվել է արդարացման դատավճիռ, որոնց արդյունքում անձն ստանում է՝ հանցագործությամբ

կամ ապօրինի ձերբակալման, կամ ապօրինի կալանքի տակ գտնվելու հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում պահանջելու հնարավորություն:

«Հրապարակային դատաքննության ապահովման պարտականության ապահովման հայեցողության դրսևվորումները» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում հեղինակը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի բացարձականացնում դատական քննության հրապարակայնության սկզբունքը և նախատեսում է որոշակի սահմանափակումներ, որոնցից հետևում է, որ ամեն մի գործով դատական նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը ոչ հրապարակային անցկացնելու հարցի լուծումը թողնվում է դատարանին: Վերջինս որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը՝ ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար: Ամեն դեպքում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված: Ոչ հրապարակային դատավարություն անցկացնելու միակ հիմքը հանգում է նրան, որ հրապարակայնությունը կարող է վնասել բարոյականությանը. Հասարակական կարգին, ազգային անվտանգությանը, անչափահասների շահերին, մասնավոր կյանքին և արդարադատության շահերին: Այս հիմքերն ունեն գնահատողական բնույթ, և հետևաբար, պետությունները ունեն որոշակի հայեցողության դրսևորման հնարավորություն:

Դատական քննության հրապարակայնությունը առաջին հերթին վերաբերում է ապացույցների հետազոտմանը: Սակայն, վկաների, տուժողների և նրանց հարազատների անվտանգության տեսանկյունից, բնավ պարտադիր չէ, որպեսզի ամբաստանյալն իմանա համապատասխան վկայի կամ տուժողի իսկական անուն-ազգանունը, ինչպես նաև վերջիններիս բնակության և աշխատանքի վայրը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով հետապնդվող նպատակն է ապահովել հանրային վերահսկողությունը դատական իշխանության նկատմամբ և դրանով իսկ երաշխավորել արդարացի դատական քննության անցկացումը, ինչը լիովին իրագործվում է վճռաբեկ վարույթի հետ կապված որոշումը հանձնելու միջոցով: Դա մատչելի է դարձնում որոշման ամբողջ տեքստը նույն այն չափով, որքանով և դրա հրապարակային ընթերցումը, մանավանդ որ վերջինս հաճախ սահմանափակվում է միայն որոշիչ մասի ընթերցմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի որոշման հրապարակային ընթերցման բացակայության փաստը տվյալ դեպքում Կոնվենցիայի խախտում չի հանդիսանում:

«Ողջամիտ ժամկետների որոշման հայեցողության սահմանները» վերնագրված երկրորդ պարագրաֆում հեղինակը քննարկում է ողջամիտ ժամկետների որոշման հարցը նշելով, որ ամրագրելով «ողջամիտ ժամկետ» հասկացությունը՝ Եվրոպական կոնվենցիան մեկնաբանման լայն հնարավորություններ տվեց իր կիրառողներին: Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի Կոնվենցիայի ցանկացած դրույթի մեկնաբանում նպաստի արդարացի դատաքննության իրավունքի իրականացմանը, ինչպես նաև եվրոպական միասնական նախադեպային իրավունքի ձևավորմանը: Ողջամտության հասկացության հիմքում ընկած է «բանականություն» հասկացությունը, որը նշանակում է միտք, գիտակցելու և հասկանալու ընդունակություն:

Կոնվենցիան որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր նշում է «գործը ողջամիտ ժամկետում քննելը»: Սակայն, չնայած նրան, որ Կոնվենցիան խոսում է

դատարանի կողմից՝ գործի ողջամիտ ժամկետում քննելու իրավունքի մասին, Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամկետի տևողությունն սկսում է հաշվարկվել մինչև գործը դատարանի կողմից քննվելու պահը և ավարտվում տվյալ պետության բարձրագույն դատական ատյանի վերջնական որոշմամբ:

«Անկախ և անկողմնակալ դատարան հիմնելու հայեցողությունը» վերնագրված պարագրաֆում հեղինակը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ասվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունք: Այս երկու չափանիշները՝ անկախությունը և անկողմնակալությունը, սերտորեն կապված են միմյանց հետ, և հաճախ Դատարանը դիտարկում է դրանք միաժամանակ: Դատարանի անկախությունն առաջին հերթին պայմանավորված է դատավորի անկախությամբ, իսկ դա նշանակում է, որ դատավորի նշանակումը, առաջխաղացումը, պատասխանատվությունը կարգավորող նորմերը պետք է ամրագրված լինեն Հիմնական օրենքում: Դատավորի անկախության հետ սերտորեն կապված է դատավորի անաչառության գաղափարը:

Որպես կանոն, համարվում է, որ դատարաններն անկախ են, և դատավորների համար հազվադեպ է լինում որոշել, թե արդյոք դատարանն անկախ է, թե՛ ոչ, բացառությամբ այն իրավիճակների, երբ նրանց հանձնարարված է քննել ոչ դատական մարմինների կողմից ընդունված որոշումները: Այն դեպքերում, երբ դատարան չհանդիսացող մարմինների վրա դրված է քաղաքացիաիրավական բնույթի կամ քրեական մեղադրանքների հետ կապված հարցերի քննության գործառույթ, դրանք պետք է գործեն անկախության և անկողմնակալության սկզբունքներին համապատասխան: Դատական մարմնի անկախության հարցը որոշելիս՝ Դատարանը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները՝ դրա անդամների նշանակման կարգը, նրանց պաշտոնավարման տևողությունը, նրանց վրա ճնշում գործադրելուն խոչընդոտող երաշխիքների գոյությունը, տվյալ մարմնի համար անկախության արտաքին ատրիբուտներ ունենալու հարցը, դատական մարմինը պետք է անկախ լինի ինչպես գործադիր իշխանությունից, այնպես էլ կողմերից:

«Հայեցողության դրսևորումները արդար և հրապարակային դատաքննություն երաշխավորելու պարտականության ապահովման հարցում» վերնագրված հինգերորդ պարագրաֆում հեղինակը ներկայացնում է, որ արդարացի դատական քննության իրավունքն իր մեջ ներառում է կողմերի հավասարության սկզբունքը: Դա նշանակում է, որ դատաքննության կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորել իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու հնարավորություն, որոնք, ի տարբերություն հակառակ կողմի, նրան չեն դնում էականորեն անբարենպաստ դրության մեջ: Կողմերի դրությունը դատաքննության ժամանակ պետք է լինի արդարացիորեն հավասար:

«Անմեղության կանխավարկածի ապահովման հայեցողությունը» վերնագրված վեցերորդ պարագրաֆում ներկայացվում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում է, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Սակայն տվյալ դրույթը կիրառելի է նաև մի շարք քաղաքացիական գործերի

նկատմամբ, որոնք, Կոնվենցիայի համաձայն, քննվում են որպես քրեական, օրինակ՝ մասնագիտական կարգապահական վարույթները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը գործում է քրեական դատավարության ողջ ընթացքում, և քննություններն ավարտելիս կամ մեղադրյալին արդարացնելիս դատավորների կողմից արված ցանկացած դիտողություն, կհամարվի անմեղության կանխավարկածի խախտում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է, որ գործի վարույթը տարվի դատավարական օրենքով սահմանված կանոններին խստիվ համապատասխան: Օրինական և հիմնավորված կարող է համարվել միայն այն դատավճիռը, որը կայացվել է դատավարական օրենքի պահանջների պահպանմամբ: Ըստ անմեղության կանխավարկածի՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, դրանից հետևում է, որ մեղադրյալը կարող է չմասնակցել ապացուցմանը. ցուցմունքներ չտալ, միջնորդություններ չանել և այլն:

«Քրեական հետապնդման ենթարկված անձանց նվազագույն երաշխիքների տրամադրման հայեցողության դրսևելորումները» վերնագրված յոթերորդ պարագրաֆում հեղինակը ներկայացնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում թվարկված նվազագույն երաշխիքների ցանկը սպառնիչ չէ: Դրանում ներկայացված են արդարացի դատաքննության իրավունքի առավել կոնկրետ ասպեկտները: Դատարանը բնորոշել է 6-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 3-րդ մասի միջև հարաբերակցությունը՝ որպես ընդհանուրի մասնավորի: Օրինակ, կարող է տեղի ունենալ արդարացի դատաքննության պահանջների խախտում, չնայած այն հանգամանքին, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված նվազագույն երաշխիքները պահպանվել են:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի “ա” ենթակետով սահմանված մյուս երաշխիքն այն է, որ առաջադրված մեղադրանքի էությունը և հիմքերը մեղադրյալին պետք է ներկայացվեն նրան հասկանալի լեզվով: Խոսքը վերաբերում է դատավարության լեզվի սկզբունքի պահպանմանը: Մեղադրյալին նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն մեղադրանք առաջադրելու և նրան հարցաքննելու ժամանակ, այլ նաև դատավարության ամբողջ ընթացքում: Որևէ խոսք չի կարող լինել մեղադրյալի ցանկացած իրավունքի իրացման մասին, եթե նա չի տիրապետում դատավարության լեզվին: Այդ է պատճառը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածն իր “ա” և “ե” կետերով անդրադառնում է նշված հիմնախնդրին: Եթե “ա” կետում Կոնվենցիան պահանջում է, որպեսզի առաջադրված մեղադրանքի մասին նրան տեղյակ պահվի իրեն հասկանալի լեզվով, ապա “ե” կետում արդեն խոսքը վերաբերում է այդ երաշխիքի իրականացմանը՝ ընդհանրապես. օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

«Եվրոպական դատական պրակտիկան Հայաստանի վերաբերյալ գործերով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառման համատեքստում:» վերնագրված պարագրաֆում հեղինակը ներկայացնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքերով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ գործերով Դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը, որը առաջադրում է մի քանի օրինաչափություններ,

որոնք համադրելով Դատարանի ընդհանուր նախադեպային իրավունքի դրույթների հետ, ուրվագծում են ՀՀ ներպետական դատարանների հայեցողության սահմանները: Հայաստանի դեմ կայացված վճիռների վերլուծությունը հնարավորություն կընձեռի խմբավորել և վերհանել ներպետական դատարանների հայեցողության դրսևորումները, որոնք Դատարանի կողմից համարվել են անընդունելի:

Հայաստանի դեմ ներկայացված բոլոր գործերը ըստ էության վկայում են, որ Հայաստանի Հանրապետության դատարանները արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման գործընթացում դեռևս թույլ են տալիս Կոնվենցիոն այնպիսի խախտումներ, որոնք իրենց ամբողջության մեջ կարող են բնութագրել արդարադատության որակը երկրում: ՀՀ դատարանների հայեցողության ծայրահեղ լայն դրսևորումները չեն նպաստում երկրում իրավական պետության կայացման գործընթացին, ինչը պահանջում է վերջիններիս հայեցողության սահմանների հստակեցում:

«Եզրակացության» մեջ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից կիրառվող պետության հայեցողության հասկացության և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության զուգահեռ կատարված ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների հասկացությամբ ապարատում առաջարկվում է կիրառության մեջ դնել նոր հասկացություններ, ինչպիսիք են «պետության հայեցողություն», «պետության հայեցողության սահմաններ» և «պետության հայեցողության ազատություն» հասկացությունները: Կիրառական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հասկացություններին տրվել են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին բնորոշ ճշգրիտ սահմանումներ: Աշխատության մեջ կատարված լեզվատրամաբանական և իրավական հիմնախնդիրների վերլուծության արդյունքում, առաջարկվում է հայ իրավագիտության մեջ կիրառել բացառապես «պետության հայեցողության սահմաններ» հասկացությունը, նկատի ունենալով, որ «հայեցողություն» տերմինը արդեն իսկ իր մեջ պարունակում է ընտրանքային վարքագծի, կամընտրության հնարավորություն, ինչն էլ իր հերթին կանխորոշում է պետության գործողությունների որոշակի «ազատությունը»: Այսինքն, «հայեցողության» և «ազատություն» հասկացությունների համակցումը առաջացնում է որոշակի համընկում, իսկ «սահմաններ» տերմինը արդեն իսկ ենթադրում է սահմանագիծ, թույլատրելի չափ, ինչը այս դեպքում ուղղակի կիրառելի է «հայեցողության» «անսահմանությունը» սահմանափոկելուն՝ ինչը և բխում է «պետության հայեցողության սահմաններ» սկզբունքի կիրառման բնույթին և բովանդակությանը:

2) Ատենախոսությունում իրականացված հետազոտության արդյունքում առաջարկվում է այն մոտեցումը, համաձայն որի պետության հայեցողության սահմաններ հասկացության գիտական շրջանառության մեջ ներկայումս առկա սահմանումը ամբողջությամբ չի արտահայտում հայեցողության սահմանների էությունը, այն առումով, որ հայեցողության սահմանները, ըստ էության ընդգծվում են այլ սուբյեկտի կողմից՝ Եվրոպական դատարանի, հետևաբար, դա չի կարող բնութագրվել միայն, որպես պետությանը տրված լիազորություն կամ պարտավորությունների կատարման

եղանակ: Այսինքն, հայեցողության սահմանները չեն կարող բնութագրվել միայն, որպես պետության լիազորությունների ամբողջություն, դա նաև Դատարանի տրված հնարավորություն է գնահատելու պետության կողմից իր լիազորությունների կատարման մակարդակը: Ամփոփելով հայեցողության սահմաններ հասկացության վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև, վերհանելով խնդրո առարկա ինստիտուտի համակարգային և ֆունկցիոնալ վերլուծության արդյունքները, առաջարկվում է, որ հայեցողության սահմաններ հասկացությունը կարելի է բնութագրել, երկու տեսակետից՝ պետության ներքին ընկալման, և՛ Եվրադատարանի նախադեպային իրավունքի համատեքստում: Առաջին տեսակետից, առաջարկվում է պետության հայեցողությունը բնութագրել, որպես անհատի և հասարակության շահերի հավասարակշռությունն ապահովելուն ուղղված պետության լիազորությունների համակցություն, որի սահմանները որոշվում են մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից:

3) Վերլուծության արդյունքում ատենախոսության մեջ հանգել ենք այն եզրակացության, որ «օրենքի գերակայություն» և «իրավունքի գերակայություն» սկզբունքների զուգակցումն է ապահովում պետության հայեցողության սահմանների կիրառման հնարավորությունը, հաշվի առնելով, որ հայեցողությունը տրվում է պետությանը բացառապես օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգով և դեպքերում: Իրանով է պայմանավորված, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար ուղղակի լիազորված են օրենսդրությամբ: Հետևաբար, պետության և պետական մարմինների հայեցողության հիմքը նախադեպային իրավունքի համատեքստում օրենքի գերակայության սկզբունքն է: Այնինչ, հայեցողության սահմանները որոշվում են, ոչ թե օրենքով սահմանված կարգով և դեպքերում, այլ «Իրավունքի» բովանդակությամբ: Այսինքն, հայեցողության «սահմանները» որոշվում են արդեն իրավունքի գերակայության սկզբունքի շրջանակներում և դրա կիրառմամբ: Արդյունքում առաջարկվում է գիտական այն մոտեցումը, ըստ որի՝ «պետության հայեցողությունը տրված և երաշխավորված է օրենքի գերակայության սկզբունքով, իսկ դրա սահմանները որոշվում և հստակեցվում են իրավունքի գերակայության սկզբունքով»:

4) Ատենախոսության մեջ առաջարկվում են այն չափորոշիչները և սկզբունքները, որոնց հիման վրա իրականացվում է պետության հայեցողությունը և որոնք նախանշում են պետության հայեցողության սահմանները: Տրվում են նշված սկզբունքների և չափորոշիչների նշանակությունը պետության հայեցողության և պետության հայեցողության սահմանների կիրառման համատեքստում: Այդ սկզբունքներից յուրաքանչյուրը լրացնում են միմյանց՝ արդյունքում ապահովելով ոչ միայն պետությունների կողմից իրենց հայեցողության սահմանների ճշգրիտ պահպանումն, այլև՝ անհրաժեշտ հնարավորություն են տալիս Դատարանին պահպանելու հստակ հավասարակշռություն՝ պետությունների ինքնուրույնության ապահովման և Եվրոպական չափանիշների երաշխավորման միջև: Հայեցողության սահմանները չեն կարող ապահովել ինքնուրույն կիրառություն, եթե դրան չնախորդեն կամ առնվազն չզուգակցեն կոնվենցիոն համակարգի բաղկացուցիչ մաս կազմող մի շարք սկզբունքներ: Աշխատության մեջ հանգում ենք այն

եզրակացությանը, որ այս համատեքստում հատկապես կարևոր նշանակություն ունի սուբսիդիարության, չորրորդ աստանի, ապացուցման բեռի տեղաբաշխման, ներպետական պաշտպանության միջոցների սպառման և համաչափության սկզբունքները, որոնք դիտվում են, որպես անհատի իրավունքները և հասարակության ընդհանուր հանրային շահը գնահատելու կայուն և հիմնական չափանիշներ, որոնք բոլորը կոչված են սահմանելու, թե արդյոք պետությունները խախտել են հայեցողության թույլատրելի սահմանները:

5) Ատենախոսության մեջ հանգում ենք այն եզրակացությանը, որ ԵԽ անդամ արկրների միջև ձևավորված «կոնսենսուսի» արդյունքները ուղղակիորեն պետք է դիտարկել, որպես պետության իրավունքի աղբյուր: Մասնավորապես, ԵԽԽՎ, ԵԱՀԿ, Եվրապառլամենտի և այլ միջազգային մարմինների առաջարկությունները և այլ խորհրդատվական բնույթի փաստաթղթերը (կոնսենսուսի արդյունքները), թեև չունեն դեռևս պարտադիր իրավաբանական ուժ ֆորմալ տեսանկյունից (չեն հանդիսանում միջազգային պայմանագիր կամ այլ պարտավորության բնույթ չունեն), այնուամենայնիվ պարտադիր են կիրառման պետությունների կողմից: Փաստն այն է, որ Դատարանի կողմից անդամ պետությունների միջև առաջացած «կոնսենսուսը» հանդիսանում է ոչ թե Դատարանի նախադեպային իրավունքի հիմք, այլ, իքնին, հանդիսանում է պետությունների համար, որպես իրավունքի աղբյուր, քանի որ այդ պահանջների (առաջարկությունների) չկատարումը ուղղակիորեն առաջացնելու է պետության պատախանատվություն: Այս եզրակացությունը կարող է լուրջ քննադատության արժանանալ, և իր բնույթով համարձակ է, այնուամենայնիվ, փաստ է, որ զուտ կոնսենսուսի առկայությունը, որն իր արտացոլումն է գտել ԵԽ, ԵՄ և ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովների փաստաթղթերում, ուղղակիորեն հիմք են հանդիսանում պետությունների համար վարքագծի և իրավական կարգավորումների և դրանց կանխատեսելիության համար:

6) Առաջարկվել են պետության հայեցողության և դրա սահմանների կայունության չափորոշիչները: Այսինքն, առաջարկվել է մի մեթոդ որի որի միջոցով պետությունները կարող են բավարար ճշգրտությամբ կանխատեսել, թե ինչ հանգամանքներում և ինչ չափով կարող է պետությունների համար կանխատեսելի լինել իրենց գործողությունների վերաբերյալ Դատարանի գնահատականը՝ Կոնվենցիոն կարգավորումների ներդրման համատեքստում: Մեթոդը հիմնված է այն եզրակացության վրա, որ հայեցողության սահմանները ստատիկ վիճակ չեն և աչքի չեն ընկնում կայունությամբ, ինչը մշտապես անորոշություն է առաջացնում ներպետական իրավակիրառ մարմինների մոտ: Այսինքն, առավել կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես պետությունները պետք է կանխատեսեն իրենց հայեցողության սահմանները կոնկրետ հարցերի լուծման, կոնկրետ իրավունքների իրացման միջամտության դեպքերում: Կոնվենցիայով սահմանված, Դատարանի նախադեպային որոշումներով փաստված չափանիշների պահպանումը որոշակի ժամանակի մեջ կարող է կորցնել իր ակտուալությունը, և դադարի հանդիսանալ երաշխիք պետությունների համար՝ իրենց գործողությունները կոնվենցիային համապատասխան կազմակերպելու համար: Այսինքն, հայեցողության սահմաններն ենթադրում է լիազորություններ, որոնցով օժտված են պետությունները միջազգային պայմանագրին համապատասխան

ստանձնած իրենց միջազգային իրավական պարտավորությունը կատարելիս, ընդ որում, հաշվի առնելով, որ Դատարանի սահմանած նախադեպերին համապատասխան Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է, հետևաբար, պետության հայեցողության սահմանները կախված են առնվազն միջազգային հարաբերությունների զարգացմանը համընթաց մարդու իրավունքների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունից:

7) Առաջարկվել է հայեցողության սահմանների կիրառման բացասական և դրական կողմերի սահմանումը և դրանց ազդեցությունը պետության հայեցողության դրսևորման հետևանքներն արդի սահմանադրաիրավական զարգացման տենդենցների համատեքստում: Վերլուծությամբ հանգում ենք այն եզրակացության, որ հայեցողության սահմաններ սկզբունքի հիմնական թերությունն ու միաժամանակ, առավելությունը՝ դրա կանխատեսելիության բացակայությունն է: Խնդրո առարկա սկզբունքի կիրառումը համապատասխանում է միջազգային պայմանագրի երկարաժամկետ կենսունակության ապահովման անհրաժեշտությամբ, որն առաջացել է պայմանավորվող պետությունների էական մշակութային ու իրավական, կրոնական և սովորութային տարբերությունների պատճառով: Ավելին, պետությանը հայեցողության որոշակի սահմանների վերապահումը անհրաժեշտ է միջազգային պայմանագրի այս կամ այն նորմի երկարաժամկետ կիրառման համար՝ նկատի ունենալով, որ հնարավոր չէ միջազգային պայմանագրով նախատեսել հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց փոփոխվող իրավական կարգավորման մեխանիզմներ: Այդ դեպքում հայեցողության ազատությունը թույլ կտար պետություններին հասարակական հարաբերություններին ներգործել ժամանակին գուզնթաց՝ դրանով իսկ չխախտելով ստանձնած միջազգային պարտավորությունները:

8) Առաջարկվել է այն թեզը, ըստ որի՝ արդար դատական քննության իրավունքը ինստիտուցիոնալ առումով չի կարող դիտվել, որպես առանձին իրավունք, և ընդհանրապես, նախադեպային իրավունքի վերլուծությունը հանգեցնում է այն մոտեցման, որ այն չի կարող դիտվել որպես առանձին իրավունքի տեսակ: Այն կարող է դիտվել բացառապես, որպես անձի իրավունքների պաշտպանության և վերականգման եղանակ, միջոց և վերջապես, երաշխիք, բայց ոչ, որպես իրավունք: Մեր համոզմամբ իրավունք պետք է դիտել, ոչ թե արդար դատաքննությունը, այլ՝ դատարանի մատչելիությունը, անովազն նկատի ունենալով, որ ֆորմալ հայեցակարգային տեսակետից իրավունքը դա անձի հնարավոր վարքագծի, գործողության դրսևորումն է, իսկ արդար դատաքննությունը՝ խախտված իրավունքների պաշտպանության և վերականգման երաշխիք: Սակայն որպեսզի այդ երաշխիքը լինի գործնականում կիրառելի, անձին վերապահվում է դատարան դիմելու իրավունք՝ դատարանի մատչելիություն:

9) Առաջարկվել է պետության հայեցողության հայեցակարգը և մեթոդաբանությունը անձի ազատության իրավունքի իրացման և իրացմանը միջամտելու պայմանները՝ Եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում: Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ըստ էության սահմանված է անձին ազատությունից զրկելու միայն մեկ պայման՝ այն պետք է իրականացվի «օրենքով սահմանված կարգով» (անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, հետապնդում է իրավաչափ նպատակ և այլ կոնվենցիոն պահանջները ֆորմալ պահանջ

չեն հանդիսանում, ինչպես Կոնվենցիայի 8-11 հոդվածների պայմաններում): Ատենախոսությունում հիմնավորվում և առաջարկվում է, անձի ազատության և անձեռնմխելիության վերաբերյալ ներպետական դատարանների հայեցողության սահմանափակման ընդհանուր բնույթի հետևյալ չափանիշները. որպեսզի անձին ազատությունից զրկելը Կոնվենցիայի առումով համարվի իրավաչափ, պետության հայեցողությունը սահմանափակված է ոչ միայն «օրենքով սահմանված կարգով» հասկացության շրջանակներում, այլև այն պետք է ոչ միայն ֆորմալ այլ նաև բավանդակային առումով նույնպես համապատասխանի Կոնվենցիայի պահանջներին: Մասնավորապես. այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ Կոնվենցիայի համատեքստում, իրագործվի կամայականությունը բացառելու եղանակով, պահպանված լինեն համափառության կանոնները, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ոչ թե՛ օրենքի ֆորմալ պահանջը իրագործվի ձևականորեն և հետապնդի իրավաչափ նպատակ:

10) Ատենախոսության մեջ իրականացված հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ կա «բերման ենթարկելու» ինստիտուտի բովանդակային նոր կիրառության անհրաժեշտությունը: Նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրության համաձայն անձին ազատությունից զրկել է համարվում անձին ձերբակալելը և կալանավորելը, իսկ բերման ենթարկելը չի համարվում ազատությունից զրկում, ատենախոսությունում առաջարկվում է, որ բերման ենթարկելը համարվի ազատության իրավունքի սահմանափակում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով: Դա տրամաբանական է, քանի որ եթե անձի ազատությունը սահմանափակվում է բերման ենթարկելու եղանակով, վերջինս որևէ դեպքում չի օգտվում ձերբակալվածին վերապահված կարգավիճակից, հետևաբար նաև՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից: Կարևոր, բայց ոչ որոշիչ տարբերությունը, որով և սահմանվում է պետության հայեցողությունը, համարվում է ազատությունից զրկելու ժամանակահատվածը: ՀՀ օրենսդրությամբ ձերբակալման առավելագույն ժամանակահատվածը սահմանված է 72 ժամ, այսինքն, մինչև 72 ժամ: Իսկ բերման ենթարկված անձին պահելու որևէ ժամանակազրական սահմանափակում՝ նվազագույն կամ առավելագույն ժամանակահատված սահմանված չէ, հետևաբար անձին բերման ենթարկելը ըստ էության կարող է դիտվել ազատությունից զրկում 5-րդ հոդվածի իմաստով՝ դրանից բխող հետևանքներով: Այստեղից հետևում է, որ միայն ազատությունից զրկելու տևողությունը չի կարող դրվել երկու ինստիտուտների տարբերության հիմքում: Այդ իմաստով հատկապես ուշադրության արժանի է նյութական կողմը, այսինքն անձին բերման ենթարկելու հիմքը, նպատակը և այն հարցերը, որոնք տրվում են բերման ենթարկված անձին: Անձին բերման են ենթարկում դատավարական գործողություններին մասնակցելու համար: Բացի կասկածյալից և մեղադրյալից, բերման են ենթարկվում նաև վկաները և տուժողները: Եթե, օրինակ, վերջիններս բերման են ենթարկվում հարցաքննության համար, հետևաբար, եթե վերջինիս տրվում են հարցեր, որոնք իրենց հիմքում ունեն մեղադրական ուղղվածություն կամ կասկած՝ հանցագործությանը տվյալ անձի առնչության մասին, ապա միանշանակ է, որ և փաստացիորեն և իրավաբանորեն անձին ազատության սահմանափակումը բերման ենթարկելու եղանակով, պետք է դիտվի որպես ձերբակալություն: Հետևաբար,

բերման ենթարկվող անձը դե յուրե պետք է որակվի, որպես ձերբակալված անձ՝ դրանից բխող իրավական հետևանքներով, հակառակ դեպքում, յուրաքանչյուր նման դեպքով Դատարանը ճանաչելու է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

11) Առաջարկվել է անձի ազատության իրավունքի սահմանադրական և կոնվենցիոն նորմերի իրացման հարցով Հայաստանի ներպետական կարգավորման հակասությունների ցանկը, որոնց շտկումը անհրաժեշտ է կոնվենցիոն չափանիշները ապահովելու համար: Ոսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ օրենսդրությունը անձի ազատությունից զրկելու կարգավորումների մասով ուղղակի հակասում է Կոնվենցիայի պահանջներին: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի վրա օրենքով չի դրված ձերբակալվածին անհապաղ դատարան տանելու պարտականություն: Միակ երաշխիքը, որ օրենսդիրը սահմանում է ձերբակալվածի համար, դա ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատարան բողոքարկելու հնարավորությունն է, որը ներպետական օրենսդրությունում անհրաժեշտ մեխանիզմների բացակայության պատճառով կիրառում չի գտնում, այսինքն՝ գործնականում կիրառելի չէ, ինչը նշանակում է Կոնվենցիոն երաշխիքներից առնվազն մեկը փաստացիորեն գոյություն չունի: Ընդ որում, փաստացի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները Հայաստանի Հանրապետությունում ոչ օրենսդրական, ոչ գործնական մակարդակով չեն կիրառվում, ինչը դրանց բողոքարկման դեպքում մեխանիկորեն հանգեցնելու են խախտման փաստի ճանաչմանը:

12) Առաջարկվել է ՀՀ օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ՝ առանձին նշելով անձի կալանավորելու հիմքերը, նկատի ունենալով, որ գործող օրենսդրությամբ կալանավորման հիմքերը ուղղակիորեն նույնացվել են խափանման այլ միջոցների հիմքերի հետ, իսկ ակնհայտ է, որ կալանավորման հիմքերը չեն կարող նույնական լինել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներից: Նման կարգավորումը ըստ էության սահմանափակում է պետության հայեցողությունը, նկատի ունենալով, որ հստակ սահմանված է որ կալանավորումը կիրառելի է այն դեպքերում, երբ ավելի մեղմ միջոցները կիրառելի չեն և չեն կարող ապահովել կանխատեսվող արդյունքը: Իսկ այն դեպքերում, երբ կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու համար սահմանված լինեն առանձին պայմաններ, ներպետական իրավակիրառ մարմինը ըստ էության կունենա հայեցողության ավելի լայն սահմաններ՝ նկատի ունենալով երկու կարևոր հանգամանք. առաջին, Կոնվենցիան, ըստ էության, կարգավորում է ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցի կիրառման պայմանները՝ Կոնվենցիայով սահմանված իմաստով: Իսկ օրինակ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը, որը, ինչպես ցույց տվեց նախադեպային իրավունքի վերլուծությունը, ըստ էության դուրս է մնում Կոնվենցիոն կարգավորման տեսադաշտից, թեև, իրենց բնույթով որոշակիորեն սահմանափակում են եթե ոչ անձի ազատության, ապա, առնվազն՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը: Երկրորդ, կալանավորման հիմքերի առանձին սահմանումը առավել հստակ և կանխատեսելի կդարձնի այդ խափանման միջոցի կիրառման հնարավորությունը ոչ միայն անձի, այլև՝ իրավակիրառ մարմնի համար, ինչը մարդու իրավունքների առավել պաշտպանվածության կարևոր երաշխիք է: Վերը

նշվածից կարելի է եզրակացնել նաև, որ այս հարցի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը բխում է պրակտիկայի պահանջներից և չի հակասում անձի հանրաճանաչ իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին: Միաժամանակ, առաջարկվում է օրենսդրորեն սահմանել, որ հիմնավոր կասկածների առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը, հաշվի առնելով խափանման միջոցների կիրառման ընդհանուր պայմանները, կարող է կալանավորում կիրառել, եթե անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ:

13) Հիմնվելով անձի ազատության սահմանափակման և գրավ հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրներ ուսումնասիրության վրա առաջարկվել են դրանց իրացման ուղիները: Մասնավորապես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը ապահովում է մինչև դատաքննությունը երաշխիքով ազատ արձակվելու իրավունքը: Դատական նախադեպային իրավունքի վերլուծությունը վկայում է, որ անձին երաշխիքով ազատ արձակելը մերժելու չորս պատճառ կարող է լինել՝ անձի թաքնվելու վտանգ, միջամտությունը գործի ճշմարտացիությունը բացահայտելու ընթացքին, հանցագործության կանխում և հասարակական կարգի պահպանությունը, այսինքն՝ վերը շարադրված որոշ հանգամանքների դեպքում: Այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով գրավի կիրառման դեպքերը զգալիորեն սահմանափակված են: Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գրավը դա մեղադրյալին վարույթ իրականացնող մարմնի տրամադրության տակ ապահովվելու նպատակով ... գույքային ներդրումն է: Այսինքն, գրավը, որպես կալանավորման այլընտրանքային միջոց կիրառելի է բացառապես այն հիմքով, եթե կալանավորումը կիրառվել է մեղադրյալի թաքնվելու վտանգի հիմքով: Հետևաբար, եթե անձը կալանավորվել է օրինակ, այլ հանցագործություն կատարելու, կամ գործի մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու վտանգի առկայության պարագայում կամ այլ հիմքով, ապա գրավը չի կարող կիրառելի լինել ՀՀ օրենսդրության պարագայում: Մոտեցումը անընդունելի է, քանի որ Կոնվենցիայով ինքնին նախատեսվում է անձին ազատությունից զրկելու բազմաթիվ հիմքեր, հետևաբար, դրանցից յուրաքանչյուրի հիմքով անձին կալանավորելու դեպքում գրավով ազատ արձակվելու իրավունքը պետք է կիրառելի լինի, հետևաբար, ՀՀ օրենսդրության փոփոխությունները անխուսափելիորեն անհրաժեշտ են:

14) Առաջարկվել է սահմանազատել իրավահարաբերությունների այն շրջանակը, որի սահմաններում կիրառելի է արդար դատաքննության կոնվենցիոն կարգավորումների ներազդեցությունը: Առաջարկվել է ներպետական կարգավորման տեսակետից իրավահարաբերությունները «քաղաքացիական» դիտելու պետության հայեցողությունը բնութագրող սահմանները: Անձի արդար դատական քննության իրավունքը երաշխավորվում է Կոնվենցիայով բացառապես իր քրեական կամ քաղաքացիական իրավունքների պաշտպանության դեպքում: Սակայն «քրեական» և «քաղաքացիական» հասկացությունների նախադեպային իրավունքի վերլուծությունը վկայում է, որ դրանց ներպետական նշանակությամբ կիրառումը ուղղակի հակասության մեջ է մտնում Դատական նախադեպին: Մասնավորապես, վերջին 20 տարիների ընթացքում դատական նախադեպային իրավունքը հանգեցրել է նրան, որ Կոնվենցիայի

իմատով դատական պաշտպանության տակ են դիտվել այնպիսի իրավահարաբերություններ, ինչպիսիք են ամուսնալուծման, հարկային և որը առավել կարևոր է՝ ընտրական իրավավունքների պաշտպանությունը, ինչը, անվիճելիորեն ոչ քրեական, ոչ էլ՝ առավել ևս, քաղաքացիական բնույթի իրավունք է: Արդար դատական քննության երաշխիքները կիրառելի են դատական քննության այն փուլերում, որոնք նվիրված են սեփականագրվման, հողատարածքների խոշորացման և դրանց պլանավորման հարցերին, ինչպես նաև շինարարություն և գործառնությունների այլ տեսակների իրականացման թույլտվություն ստանալուն վերաբերող ընթացակարգերին՝ կապված անշարժ գույքի հետ, որոնք ուղղակի հետևանքներ կարող են ունենալ սեփականության տիրապետման իրավունքի իրականացման համար, ինչպես նաև ավելի ընդհանուր բնույթի քննությունների ընթացքում, որոնց արդյունքը պետք է ազդեցություն ունենա սեփականության իրավունքի օգտագործման կամ իրացման վրա: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը նաև տարածվում է առևտրային գործունեությամբ զբաղվելու իրավունքի վրա: Միաժամանակ, 6-րդ հոդվածը կիրառվում է այն գործերով, որոնք վերաբերում են ընտանեկան իրավունքի ոլորտում գործող իրավունքներին և պարտականություններին: Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները կիրառելի են նաև վարչակազմի գործողությունների դեմ ուղղված դատական քննությունների նկատմամբ, վնասների հետ կապված հարցերում, որոնք առաջացել են վարչական և քրեական դատավարության ընթացքում: Հարկերին և հարկային դրույքներին վերաբերող, ներգաղթի և քաղաքացիության հարցերը, զինապարտությանը վերաբերող հարցերը չհանդիսանալով քաղաքացիական իրավունքներ, իրենց բնույթով ընկնում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների տակ: Եզրակացությունն այն է, որ ներպետական կարգավորման տեսակետից իրավահարաբերությունները «քաղաքացիական» դիտելու տեսանկյունից պետության հայեցողությունը բնութագրվում են հետևյալ սահմաններով՝ այն բոլոր գործերը, որոնք իրենց բնույթով քաղաքացիական չեն, սակայն իրավահարաբերության արդյունքում հանգեցրել կամ կարող են հանգեցնել գույքային կամ նյութական հետևանքների, այդ թվում՝ պետության վարչական ներգործության արդյունում առաջացող բոլոր հարաբերությունները, Կոնվենցիայի իրմաստով դիտվում են «քաղաքացիական» և պաշտպանվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքներով:

15) Առաջարկվել է կիրառել «քրեական մեղադրանք» կոնվենցիոն հասկացության ՀՀ ներպետական իրավական բովանդակության նոր սահմանում: Մասնավորապես, անձի արդար դատական քննության իրավունքը երաշխավորվում է Կոնվենցիայով բացառապես իր քրեական կամ քաղաքացիական իրավունքների պաշտպանության դեպքում: Սակայն այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում ՀՀ քրեակադատավարական օրենսդրությամբ, շատ դեպքերում Դատարանի կողմից դիտվում են, որպես քրեական՝ դրանից բխող հետևանքներով: Այս պայմաններում, ներպետական մակարդակով իրավահարաբերությունների ներազդելու հայեցողությունը չունի բավարար հստակություն և կանխատեսելիություն: Նախադեպային իրավունքի վերլուծությունը առանձնացրել է երեք ասպեկտներ, դրանք են՝ որակումը ներքին իրավունքի համակարգում, իրավախախտման բնույթը, պատժի բնույթը և խստության աստիճանը: Որակումը ներպետական իրավունքի համակարգում

ենթադրում է, որ եթե արարքը քրեական է որակվում համապատասխան պետության ներպետական իրավունքի համակարգում, ապա այդ դեպքում 6-րդ հոդվածն ինքնաբերաբար կիրառելի է դատաքննությունների ընթացքում, մնացած բոլոր հանգամանքները կորցնում են իրենց նշանակությունը: Իրավախախտման բնույթի առումով, պետք է դիտարկել երկու հանգամանք՝ խախտված իրավական նորմի կիրառման ոլորտը և պատժի նպատակը: Խախտված իրավական նորմի կիրառման ոլորտը եթե քննարկվող իրավական նորմը կիրառվում է միայն անձանց սահմանափակ խմբի, օրինակ, որոշակի մասնագիտության ներկայացուցիչների նկատմամբ, նշանակում է, որ խոսքը վարչական, այլ ոչ թե քրեական դատաքննության մասին է: Հաջորդ կարևոր գործոնը պատժի նպատակն է, որը կարևոր չափանիշ է քրեական և վարչական սանկցիաների տարբերակման առումով: Պատժի բնույթը և խստության աստիճանը ևս կարևոր նշանակություն ունեն տարբերակման հարցում և այն դեպքում, երբ արարքի սանկցիայում նախատեսված տույժի տեսակներից մեկն անգամ պարունակում է ազատությունից զրկելու ձևով տույժի կիրառում, ապա դա ինքնին դիտվում է, որպես քրեական պատիժ: Արդյունքում՝ կատարված վերլուծություններն ու եզրահանգումները հիմք են տալիս առաջադրելու այն մոտեցումը, որ «քրեական մեղադրանք» կարող է դիտվել ցանկացած իրավունքի ճյուղով կարգավորվող ներգործության այն եղանակները, որոնք կարգավորված են քրեական օրենսդրությամբ կամ իրավախախտման բնույթով հանցավոր են կամ ուղղված են անորոշ շրջանակի անձանց կամ ներգործության եղանակի նպատակը և խստության աստիճանը համապատասխանում են հանցագործության ներգործության միջոցներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պետության հայեցողությունը և դրա սահմանները Եվրոպական կոնվենցիոն կարգավորման պայմաններում, Մենագրություն, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 2017., 141 էջ:

2. Պետության հայեցողությունը և դրա սահմանները Եվրոպական կոնվենցիոն իրավական կարգավորման համատեքստում (ձերբակալում, կալանավորում և արդար դատաքննություն), Մենագրություն, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 2017., 553 էջ:

3. Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է» սկզբունքի կիրառությունը, որպես Եվրոպական դատարանի նախադեպը փոխելու հիմք (գիտա-գործնական վերլուծություն), Արդարադատություն, հոկտեմբերի 5(40), 2017, էջ 4-9.

4. Պետության հայեցողության սահմանների հասկացությունը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավագործության շրջանակներում, Հանրային կառավարում, 2/2017. էջ 107-114.

5. Պետության հայեցողության դրսևորման սահմանները, ըստ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի,(գիտա-գործնական վերլուծություն) Արդարադատություն, հոկտեմբերի 5(40), 2017, էջ 74-79.

6. Հայեցողության սահմանները, որպես ներպետական մարմինների գործունեության ուղղության անորոշ և անկայուն չափանիշ, Արարադատություն, 4(39, 2017), էջ 17-21.

7. «Կոնսենսուսի» ազդեցությունը Եվրոպական դատարանի դիրքորոշումների վրա, (գիտա-գործնական վերլուծություն), Հանրային կառավարում, 5/2017. էջ 185-191.
8. Հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառման ազդեցության գնահատումը Դատարանի գործունեության և պետության իրավական համակարգի վրա, (գիտա-գործնական վերլուծություն), Հանրային կառավարում, Հատուկ թողարկում, Միջազգային գիտաժողով 3-4/2017., էջ 507-517.
9. Հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառությունը միջազգային իրավունքում և դրա ուղղվածությունը, (գիտա-վերլուծական հետազոտություն), Օրինականություն, N 101 20017. էջ 8-15.
10. Կալանավորման կոնվենցիոն հիմքերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության կարգավորումներին, Արդարադատություն, դեկտեմբերի 6 (41), էջ 5-9.
11. Առանձին կատեգորիայի անձանց ազատությունից զրկելու առանձնահատկությունները Կոնվենցիոն կարգավորումների համատեքստում, Արդարադատություն, դեկտեմբերի 6 (41), էջ 49-51.
12. Ազատությունից զրկելու նախնական դրսևորումները ըստ Մարդու իրավունքների Եվրոպական Կոնցենցիայի, Հանրային կառավարում, 5/2017, էջ 156-191.
13. Непредсказуемость и неопределенность решений Европейского Суда. сущность и основа неопределенности. (Научно-практический анализ)- Евразийский юридический журнал, N 9 (112) 2017, стр. 63-67.
14. Сущность и основа решений Европейского Суда (Научно-практический анализ)- Academic Journal Law, Tbilisi, Vol.1, 2017. стр 14-19.
15. Основы применения принципа пределов усмотрения (Научно-практический анализ) –Международный научный журнал «Прогресс», Тбилиси, 2017, N 5-6, ст 49-54.
16. Сущность пределов усмотрения государств в рамках юрисдикции Европейского Суда по правам человека (Научно-практический анализ) – International scientific Journal Business-Engineering, Georgian Academy of Engineering, N 3/ 2017. стр 424-429.
17. Формирование принципа пределов усмотрения в судебной практике международных судов (научно-практический анализ) – Научный журнал «Вертикали истории», Тбилиси, 37-38/2017. стр. 73-79.
18. Сущность и основа решений Европейского Суда (Научно-практический анализ)- Научный журнал «Вертикали истории», Тбилиси, 37-38/2017. стр. 80-87.
19. Костанян Г.С. Понятие пределов усмотрения государства в рамках юрисдикции Европейского Суда по правам человека” года // Конституционное право: итоги развития, проблемы и перспективы. Сборник материалов международной научной конференции. 16-18 марта 2017 года. Юридический факультет МГУ имени М.В. Ломоносова / Отв. ред. проф. Авакьян С.А. М., 2017. (стр.234-245)

ГЕВОРГ СУРИКОВИЧ КОСТАНЯН

**ПРОБЛЕМЫ УСМОТРЕНИЯ ГОСУДАРСТВ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ
И КОНВЕНЦИОНАЛЬНЫХ РЕГУЛИРОВАНИЙ
(ПРАВО НА СВОБОДУ И ЛИЧНУЮ НЕПРИКОСНОВЕННОСТЬ И
СПРАВЕДЛИВОГО СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА)**

Диссертация на соискание учёной степени доктора юридических наук по специальности «Публичное право»

Защита диссертации пройдёт 20 января 2018 года, 12:00 часов на заседании профессионального совета 041 юриспруденции Академии государственного управления РА (Высшая аттестационная комиссия Республики Армения), 0028, г. Ереван, Киевян 8).

РЕЗЮМЕ

Докторская диссертация является первым всесторонним исследованием вопросов права на свободу и личную неприкосновенность личной свободы и безопасности (статья 5 Конвенции) и гарантий справедливого судебного разбирательства (статья 6 Конвенции) в армянской науке и применения «границы усмотрения» судами Республики Армения.

Наивысший уровень неудовлетворенности в армянском обществе связан с установлением справедливости и гарантией устойчивости правосудия. И после вступления в Совет Европы ожидания общественности увеличились в вопросе укрепления прав человека в стране. В этом смысле, естественно, главная проблема связана с правами человека на свободу и личную неприкосновенность, а также на справедливое судебное разбирательство. Последнее особенно важно с точки зрения обеспечения прав человека в стране.

Основным предметом диссертации является проявление усмотрения судов Республики Армения и ее пределы в осуществлении положений Конвенции.

В диссертации рассматривается прецедентное право Европейского суда по правам человека относительно свободу и личную неприкосновенность и нарушения прав на справедливое судебное разбирательство. В то же время он отдельно рассматривает прецедентное право Европейского суда в рамках судебных решений против Республики Армения с обсуждением оснований и пределов усмотрения государства.

Научная новизна исследования, в частности, состоит в следующем:

Впервые в армянской юридической науке диссертация представляет собой предмет обсуждения на научно-практическом уровне, сущность и содержание дискреционного применения норм Конвенции и границ Конвенции государствам, которые обусловлены ратификацией Европейской конвенции о защите прав человека и основных свобод.

Прецедентное право Европейского суда по правам человека, касающееся свободу и личную неприкосновенность, которое было объединено с решениями против Республики Армения в отношении статьи 5 Конвенции, было тщательно проанализировано путем выявления и раскрытия их закономерностей и особенностей применения.

Работа делает предметом научного и практического обсуждения и определяет возможность способности государства вмешиваться в осуществление права человека на свободу и личную неприкосновенность.

Впервые в работе был полностью проанализирован полный обзор права справедливого судебного разбирательства в Республике Армения и применение каждого его компонента, а также возможность неприменения последнего в исключительных случаях и его ограничения в соответствии со стандартами Совета Европы.

GEVORG SURIK KOSTANYAN

**THE MARGIN OF APPRECIATION OF THE STATE IN THE CONTEXT OF
CONSTITUTIONAL AND CONVENTIONAL REGULARITIES
(FAIR TRIAL AND LIBERTY AND SECURITY RIGHTS)**

The dissertation for the degree of Doctor of Law in "Public Law" specialisation

The defense of the dissertation will be held on 20 January 2018, at 12:00 o'clock at the meeting of the professional council of jurisprudence No. 041 of the Academy of Public Administration of the Republic of Armenia (The Higher Attestation Commission of the Republic of Armenia, 0028, Kievyan 8 str., Yerevan).

SUMMARY

The doctoral dissertation is the first comprehensive study of the issues of personal liberty and security (Article 5 of the Convention) and the fair trial guarantees (Article 6 of the Convention) in the Armenian science, and the application of "margin of appreciation" by the courts of the Republic of Armenia.

The highest level of dissatisfaction in the Armenian society is connected to the establishment of justice and guarantees of sustainability of justice. And after the accession to the Council of Europe, the expectations of the public have increased in the issue of strengthening human rights in the country. In that sense, naturally, the primary concern is connected to the rights of the person to liberty and security as well as the fair trial. The latter is especially important in terms of guaranteeing human rights in the country.

The main subject of the dissertation is the manifestation of the discretion of the courts of the Republic of Armenia and its limits in the implementation of the Convention's provisions.

The dissertation examines the case law of the European Court of Human Rights concerning the liberty and security of the person and the violation of the rights of a fair trial. At the same time, it separately examines the European Court's case-law within the framework of the judgments against the Republic of Armenia, with the discussion of the grounds and margin of appreciation of interference by the State.

Scientific novelty

Dissertation for the first time in the Armenian law science makes a subject matter of discussion at the scientific and practical level, the essence and content of the discretionary application of the Convention norms and the boundaries of the Convention to the states, which are conditioned by the ratification of the European Convention on the Protection of Human Rights and Fundamental Freedoms.

The case law of the European Court of Human Rights concerning the personal liberty and security, which has been combined with the judgments against Republic of Armenia in relation to Article 5 of the Convention has been thoroughly analyzed by identifying and disclosing their regularities and peculiarities of application.

The work makes it a subject of scientific and practical discussion and defines the possibility of the State's ability to interfere with the exercise of the right of person liberty and security.

For the first time in the work, the full review of the fair trial in the Republic of Armenia and the application of each component of it, as well as the possibility of non-application of the latter in exceptional cases and its limitations have been fully analyzed to ensure compliance with the Council of Europe standards.